

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGAIDOLU

ديغيجادو

Հրատարակություն Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



**Այվազեան Եղբայրներու
Յուշարձանը - Թեոդոսիա**



**Սայաթ Նովայի Յուշարձանը
Երևան**



Գահիրեի ՀԲԸՄ-ի «ԾԻԱԾԱՆ» Մանկական Երգչախումբը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Շաքէ Մարգարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիզմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԱԾԸ
Շաքէ Մարգարեան
Վարդուհի Արթինեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

«Տեղեկատու»-ի ներկայ թիւին հետ կը բաժնուի Ռէյմոն (Յարութիւն) Գեորգեանի «ՀԻՆԳԶԱՐԻՒՐԱՄ-ԵԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ (Հայ Գիրքի Տպագրութեան 500-ամեակին Առթիւ)» խորագիրը կրող առանձին գրքոյկ-յաւելումը:

Մոհամետ Մորսի Եգիպտոսի Նորընտիր Նախագահ «Տ»	1
Եգիպտահայերը Փոքրաթիւ, Սակայն՝ Վճռական ի Հեճուկա Երկրին Մէջ Տիրող Խառնաշփոթ Իրավիճակին Յարուժ Սասունեան	2
Յուզահանդէսը Դեմքն Է Երկրին Անժիկ Յակոբեան-Կանիմեան	4
Ժիրայր Բաբազեան՝ Հանդիսավար «Ոսկէ Ծիրան» Շարժապատկերի 9-րդ Փառատօնին Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	5
Սայաթ Նովա. Ծննդեան 300-ամեակ Պատրաստեց՝ Շաքէ Մարգարեան	7
Հայոց Հսկան՝ 810-ամեայ «Մշոյ Ճառընտիր»ը Պատրաստեց՝ Շաքէ Մարգարեան	8
Հայոց Ծիածանի Երկու Երանգ՝ Գաբրիէլ Եւ Յովհաննէս Այվազեաններ Շահէն Խաչատրեան/ Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ. Մ.	10
BARON EMPAIN-ի Առեղծուածային Պալատները Սոսի Ներքտեան-Յակոբեան	14
Մեծարանքի Երեկոյ Ի Պատիւ Տիկին Արաքսի Տեովլեթեանի Անայիս Ճիզմեճեան	17
«Ծիածան»-ի Տօնական Համերգը. Հրաժեշտ Իմ Սիրելի Երգչախումբին Վարդուհի Արթինեան	18
Գափիթի ՀԲԸՄ-Ը Ընդհանուր Ակնարկով Մը Կը Ներկայացնէ ՀԲԸՄ-Ի Ամառնային Ծրագրերը Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	20
Գափիթի ՀԲԸՄ-Ը Կ'օժանդակէ Եգիպտացի Այն Համալսարանաւարտներուն, Որոնք Իբր Աւարտաճառ Կ'ընտրեն Հայոց Վերաբերեալ Նիւթ Մը Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	20
Գափիթի ՀԲԸՄ-Ը Կը Հրատարակէ Հրանդ Զեշիշեանի Դաշնամուրի Երկու Աշխատասիրութիւնները Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	21
Եկեք Նուագենք Դաշնամուր Կասիա Ճղալեան	21
Տոքթ. Անի Օհանեսեանի Ուսումնական Փայլուն Յաջողութիւնը «Տ»	22
Գափիթի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Ամառնային Եղանակի Բացումը Սոսի Ներքտեան-Յակոբեան	23
Արեւելեան Երեկոյ Գափիթի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐ Ակումբէն Ներս Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	23
Ներքտեան Ընտանիքը Գափիթի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Կը Նուիրէ Սարուխանի «Գնդամուղ Խաղացողը» Նկարը Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	24
Գափիթի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Կազմակերպած Զբօսապատույտը Դեպի «FORT ARABESQUE» Կարմիր Ծով Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	24
Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Ամառնային Եղանակի Բացումը Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	25
Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Սկաւտական «Զերմէս»ը Զաղեց՝ Անայիս Ճիզմեճեան	25
Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2012-ի Մրցաշարը Սոսի Ներքտեան-Յակոբեան	26
Մահ Յովհաննէս Տէր Պետրոսեանի (1931-2012) Զաղեց՝ Շ.Մ.	27
Անդամական	28

ՏՈՒՐՔ. ՄՈՀԱՄԷՏ ՄՈՐՍԻ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ

Երկարատեւ թոհուրոհէ, խառնաշփոթ եւ անսախազահ ընթացքէն ետք, վերջապէս Եգիպտոս կ'ունենայ նորընտիր նախագահ մը:

25 Յունուար 2011ի յեղափոխութենէն յետոյ երկրին ղեկավարութիւնը ստանձնած Չիւսէալ Ուժերու Գերագոյն Խորհուրդը հաւասարակըջուած եւ կանոնաւոր կերպով կ'առաջնորդէր եգիպտացի ժողովուրդը եւ փոթորկայոյց մէկուկէս տարիէ ետք, խաղաղօրէն կը կազմակերպէր նախագահական ընտրութիւնները:

Յունիս 24-ին Եգիպտոսի Նախագահական Ընտրութիւններու Գերագոյն Յանձնախումբը կը յայտարարէր տեղական Իսլամ Եղբայրներու Կուսակցութեան թեկնածու Տոքթ. Մոհամետ Մորսիի յաղթանակը, իր մրցակից Ահմետ Շաֆիքէն քանի մը տոկոս ձայներու առաւելութեամբ:

Տոքթ. Մորսի ստացաւ քուէներու 51,73 %-ը:

Եգիպտոսի նախագահ ընտրուելու լուրը տարածուելէ ետք՝ թէ՛ երկրին ներսէն եւ թէ՛ դուրսի երկիրներէն, Մորսի շնորհաւորանքներ ստացաւ բազմաթիւ քաղաքական գործիչներէ, որոնցմէ իւրաքանչիւրը իւրովի կը մեկնաբանէր անոր յաղթանակը: Օրինակ, Իրանը ողջունեց անոր նախագահ ընտրուիլը, սակայն առանց ակնարկութիւն ընելու երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները վերահաստատելու մասին: Իսրայէլ իր կարգին յայտնեց, թէ կը յուսայ, որ երկու երկիրներուն միջեւ կնքուած խաղաղութեան համաձայնագիրը կը շարունակէ գոյատեւել եւ համագործակցութիւնը կը շարունակուի, մինչ Քնեսէթի անդամ Պէն Արի յայտարարեց, թէ Մորսիի յաղթանակը Եգիպտոսի հետ խաղաղութեան պատրանքին վերջն է:

Նախագահը նաեւ շնորհաւորական հաղորդագրութիւն մը ստացաւ եգիպտական Չիւսէալ Ուժերու Գերագոյն Խորհուրդի նախագահ Յիւսէյն Թանթաուիէն եւ իր կարգին շնորհակալութեամբ կարեւորեց բանակին ու դատական իշխանութեան դերը՝ երկրին ժողովրդավարացման ընթացքը տնօրինելու ուղղութեամբ:

Երկրին նախագահ յայտարարուելէ յետոյ, Մոհամետ Մորսի՝ Ելոյթ ունենալով որոշակիօրէն պարզեց իր յետագայ ծրագրերը, յայտնելով որ պիտի պահպանէ միջազգային հա-



մաձայնութիւնները եւ թէ յեղափոխութիւնը պիտի շարունակուի՝ մինչեւ որ իր նպատակները իրագործէ: Ան նաեւ խոստացաւ պաշտպանել Եգիպտոսի ազգային ապահովութիւնը ու շահերը՝ թէ՛ արաբական աշխարհի եւ թէ՛ միջազգային շրջանակներու մէջ: Նորընտիր նախագահը միաժամանակ նշեց, որ Եգիպտոսը թէ՛ մահմետական եւ թէ՛ քրիստոնէայ եգիպտացիներու երկիրն է եւ որ անոնք հաւասարապէս իրաւունքներ ու պարտաւորութիւններ ունին հայրենիքին հանդէպ: Նախագահը նաեւ խոստացաւ չխառնուիլ ուրիշ երկիրներու գործերուն եւ փոխադարձաբար՝ թոյլ չտալ որ այլ երկիրներ իր երկրին ներքին գործերուն միջամուխ ըլլան:

Յունիս 27-ին Զելիոպոլսոյ Նախագահական պալատին մէջ Մոհամետ Մորսիին շնորհաւորելու համար այցելութիւն տուած Եգիպտոսի քրիստոնէայ համայնքներու առաջնորդներուն մաս կը կազմէին նաեւ Եգիպտահայոց Թեմի Առաջնորդ Գեր. Տէր Աշոտ Եպս. Մնացականեան եւ Եգիպտոսի Զայ Կաթողիկէ համայնքի Վիճակաւոր, Արհիպպատի Տէր Գրիգոր Ինգնատիոս Գուսան:

Ջերմ մթնոլորտի մը մէջ անցած ընդունելութեան ընթացքին, նորընտիր նախագահը ողջունելով ներկաները եւ շնորհակալութիւն յայտնելով այցելութեան ու շնորհաւորանքներուն համար, խոստացաւ լաւ յարաբերութիւններ պահել քրիստոնէայ բոլոր համայնքներուն հետ եւ պիտի ընդառաջէ անոնց կողմէ ներկայացուելիք բոլոր հարցերուն:

«Տ»



ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ ՓՈՔՐԱԹԻՒՄ, ՍԱԿԱՅՆ՝ ՎՃՌԱԿԱՄ Ի ՀԵՃՈՒԿՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԽԱՌՆԱՇՓՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ



Նոր վերադարձած եմ Եգիպտոս կատարած անմոռանալի ճամբորդութենէս: Առաջնորդ հայրը՝ ի դէմս Թեմական Խորհուրդին, զիս հրաւիրած էր ելոյթ ունենալու, որպէս գլխաւոր բանախօս Յայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի յուշատօսին: Որոշ մտավախութեամբ ընդունեցի Եգիպտոս ուղեւորութիւն այդ հրաւերը՝ նկատի ունենալով խառնաշփոթ իրավիճակը՝ նախագահ Յոսնի Մուպարաքի 30 տարուան բռնապետական իշխանութիւնը տապալելէ ետք:

Աշոտ Եպսկ. Մնացականեան ինծի վըստահեցուց, թէ երկրին մէջ խաղաղ մթնոլորտ կը տիրէ եւ թէ հայ համայնքը անհամբեր կը սպասէ իմ այցիս, քանի որ կը հետեւի տեղի հայկական թերթերուն մէջ հրատարակուող իմ յօդուածներուն:

Երբ Գահիրէ ժամանեցի, այցելեցի Առաջնորդարան եւ Յայաստանի Դեսպանատուն, ուր հանդիպեցայ ծանօթ դէմքի մը՝ դեսպան Արմէն Մելքոնեանի, վաղեմի ընկերս, որ տասնամեակ մը առաջ Յայաստանի գլխաւոր հիւպատոսն էր Լոս Անճելըսի մէջ: Նեղոս գետին վրայ գտնուող նաւահաշարանին մէջ, առաջնորդին եւ դեսպանին հետ հաճելի ճաշէ մը ետք, երեկոն անցուցի Գահիրէի հսկայական առեւտուրի

կեդրոնի մը մէջ՝ նոր զգեստներ գնելով, քանի որ British Airways ընկերութիւնը կորսնցուցած էր ճամպրուկս: Մերժեցի գնել ինծի առաջարկուած այն զգեստները, որոնք «արտադրուած է Թուրքիա» պիտակը կը կրէին:

Գահիրէն խիտ բնակեցուած քաղաք մըն է, որ 17 միլիոն բնակչութիւն ունի: Փոքր տարածութիւն մը ճամբորդելու համար աւելի քան մէկ ժամ կը պահանջուի: Ճանապարհային ազդալոյսերուն մեծ մասը չ'աշխատիր, իսկ փողոցները ոստիկաններ չկան: Գահիրէի ամենացնցիչ վայրը «Մեռեալներու քաղաքն» է. գերեզմանատուն մը, ուր տասնեակ հազարաւոր ողջ մարդիկ կ'ապրին գերեզմաններու միջեւ: Չարմաւալիօրէն, գերեզմանաքարերու վրայ գետեղուած են հազարաւոր արբանեակային ալեհաւաքներ (satellite dishes): Գերեզմանատան այդ թշուառ բնակիչները ինչպէ՞ս կրնան հոգալ արբանեակային հեռատեսիլի ծախսը:

Ապրիլ 28-ի երեկոյեան, ելոյթ ունեցայ Գահիրէի մէջ կայացած Յայոց Ցեղասպանութեան յուշատօսին ընթացքին, «Ցեղասպանութեան ճանաչում, թէ արդարութեան հետապնդում» թեմայով: Յաջորդ օրն իսկ ուղղուեցայ պատմական Աղեքսանդրիա



քաղաքը, ուր հայկական համայնքին կողմէ կազմակերպուած միջոցառման ընթացքին հանդէս եկայ նոյնանման ելոյթով մը:

Վերադառնալով Գահիրէ, Մայիս 2-ին մասնակցեցայ ժողովրդային հանդիպում-գրոյցի մը, որուն ընթացքին համայնքի անդամները ինծի ուղղեցին իրենց հարցերը՝ ներկայի հայկական խնդիրներուն վերաբերեալ: Չարմանալի չէ, որ այդ անխուսափելի հարցը, զոր յաճախ ինծի կ'ուղղէն բոլոր ելոյթներու ընթացքին, բարձրացուեցաւ նաեւ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ. «Արդեօք Հայերը կը գրկուի՞ն Ցեղասպանութեան փոխհատուցումը պահանջելու իրենց իրաւունքէն 100 տարի ետք»: Պատասխանս, ինչպէս միշտ, «Ոչ» էր... Համաձայն միջազգային օրէնքի՝ ցեղասպանութիւնը վաղէմութեան պայմանաժամ չի ճանչնար:

Ճամբորդութեանս ամենայիշարժան պահերէն մէկը Գահիրէի մէջ շնորհանդէսն էր գիրքիս արաբերէն տպագրութեան, որ նախօրօք հրատարակուած էր Պէյրութի մէջ, «Հայոց Ցեղասպանութիւն. Աշխարհը Կը Բարձրաձայնէ. 1915-2005: Փաստաթուղթեր եւ Հռչակագիրներ» վերնագիրով: Գիրքի հրատարակման առթիւ կազմակերպուած հիւրասիրութիւնը տեղի ունեցաւ Հայաստանի Դեսպանատան մէջ, այլ դեսպանատուներու եւ եգիպտական լրատուամիջոցներու ներկայացուցիչներու, համալսարաններու դասախօսներու, հայ համայնքի ղեկավարներու եւ կղերականներու ներկայութեան: Իրենց հակիրճ խօսքը ըսին դեսպան Մելքոնեանն ու Տոքթ. Սոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամը, որ գրած է նշեալ գիրքին նախաբանը. անոր յաջորդեց իմ եզրափակիչ ելոյթս:

Գահիրէ գտնուած ընթացքիս բազմաթիւ հարցազրոյցներ տուի, որոնք հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով հրատարակուեցան տեղական թերթերու մէջ:

Պատիւն ունեցայ նաեւ այցելելու «Յուսաբեր» եւ «Արեւ» օրաթերթերու իմ գործընկերներու: Յուզիչ այցելութիւն մը տուի նաեւ Գալուստեան Ազգային Վարժարանին, որ ուսանողներու թիւի սակաւութեան պատճառով, քանի մը օրէն կը պատրաստւէր փակելու իր դռները՝ 150 տարի համայնքին կրթական պահանջներուն ծառա-

յելէ ետք: Գալուստեանը պիտի միացուի Գահիրէի Նուպարեան Ազգային Վարժարանին:

Հայկական համայնքը ապահով է Եգիպտոսի մէջ, սակայն կը պայքարի երկրին մէջ տիրող անիշխանութեան դէմ, որ աստիճանաբար գինուորականէն կը ձեւափոխուի դէպի քաղաքացիական վարչակարգ: Նորակազմ խորհրդարանը, ուր կը գերակշռեն Իսլամ Եղբայրներն ու Սալաֆիները, հաւանական է որ ցրուի եւ փոխարինուի աւելի ներկայացուցչական մարմնով մը: Այս ամսուան վերջաւորութեան, եգիպտացիները կարելիութիւն պիտի ունենան ընտրելու իրենց երկրին նախագահը, որ կրնայ համարձակ քայլերու ձեռնարկել՝ բուժելու համար հին եւ փառաւոր երկրին բազմաթիւ ախտերը:

Վերջին տասնամեակներուն հայերու հոծ զանգուած մը լքեց Եգիպտոսը եւ մեկնեցաւ Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Աւստրալիոյ առաւել հանգիստ ափերուն վրայ բնակելու համար: Մինչդէռ անոնք, որոնք կը շարունակեն ապրիլ այդ երկրին մէջ, ամէն ինչ կ'ընեն՝ պահպանելու համար իրենց լեզուն, կրօնը եւ ազգային աւանդութիւնները: Բարեբախտաբար, տեղական հայկական կազմակերպութիւնները կ'օգտուին ընդարձակ հողատարածքներու հասոյթներէն, որոնք տասնամեակներ առաջ իրենց ժառանգ ձգած են հայ հարուստ գործարարներ եւ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Հայաստանի կառավարութեան եւ սփիւռքահայութեան պարտականութիւնն է օգնութեան ձեռք երկարել Գահիրէ եւ Աղեքսանդրիա բնակող իրենց հայրենակիցներուն, եւ թոյլ չտալ, որ այս երբեմնի կենսունակ համայնքները վերածուին հարստութիւններով լեցուն, սակայն հայութենէ ամայացած քաղաքներու, որոնցմէ կ'օգտուին քիչեր միայն:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

*Թարգմանեց՝ Կարինէ Գեորգեան
«Նոր Յառաջ»*



ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԴԷՄՔՆ Է ԵՐԿՐԻՆ

Խառնակ են ժամանակները եւ երկիրն անհանգիստ: Կ'եռայ հողագունդը հրաբուխի մը պէս: Քաղաքակրթութեան հնագոյն օրրան Եգիպտոսը անհանգիստ է ու մտահոգուած: Տիւրք է յոյլ Նեղոսը, մտազբաղ ու աւելի պղտորած: Դարաւոր Նեղոսը կը յիշէ անցած-դարձածը եւ վերըստին կը պղտորի: Կրնա՞յ չպղտորիլ, երբ մարդոց միտքն ու հոգին ալ պղտորած են եւ տեսանելի չէ տակաւին թէ երբ կը պարզուի կացութիւնը: Երբ ալեկոծ ծովու մը կը նմանի հին Եգիպտոսը, հինաւուրց Գահիրէն... Խռոված է Նեղոսը, մտահոգ, բայց կը շարունակէ իր ծանր ու վարար հոսքը: Կանգ չէ առած նաեւ կեանքը մարդկային: Մարդը կը շարունակէ ապրիլ. կ'աշխատի, կը խնդայ, կը ստեղծէ, կը կործանէ, կ'արարէ...

Գահիրէի Օփերայի համալիրի արուեստներու մեծ ցուցարահին մէջ, վերջերս բացումը կատարուեցաւ Եգիպտոսի մշակութային գործիչներու՝ գեղանկարչական եւ արձանագործութեան ստեղծագործութիւններու տարեկան ցուցահանդէսին: Սկըսեալ մուտքէն եւ առաջին ցուցարահէն, այցելուն կը նշմարէր պատկերներ երկրի այսօրւան ու երեկուան կեանքէն, մարդոց հոգեվիճակէն. խառնիխումն փողոցներ, ցուցարարներ, անկազմակերպ ամբօխ, ջարդուփշուր եղած փարաւոնական արձաններ, յուսախաբութիւն: Ոմանք կը պահանջէն մերկութեան հասնող ազատութիւն, ոմանք՝ գոցած են ամէն բան, ոմանք ըսելիքը կը ճշայ գոյններու մէջէն, ոմանք տկար են ընդդէմ արդարութեան, ոմանք պայքարը զուսպ է ու հանդարտ,

ոմանք կը ժխտեն եղածը, որ ինքզինքնին հաստատեն...

Այս ամէնուն մէջ՝ եգիպտահայ ծանօթ արձանագործ Սարգիս Թօսունեանի ոսկեփայլ արձանները: Համբերութեամբ պտըտեցայ ցուցահանդէսին բոլոր սրահները, դիտեցի ամէն գործերը եւ վստահ եղայ, որ իրապէս տարբեր են հայ արւեստագետին ստեղծագործութիւնները:

Համայն Եգիպտոսի արուեստագետներու տարեկան ցուցադրութեան իւրաքանչիւր արւեստագետ կը ներկայացնէ 1-2 գործ: Մեր հայրենակիցը ներկայացուցած է 2 գործ: Մեծ սրահին պատերէն մէկը կը ներկայացնէ հիւանդասենեակ մը, ուր ո՛չ հիւանդները հայեացք ու ըսելիք ունին, ո՛չ ալ բժիշկները: Ամէնքը յուսահատ են, ինքնամփոփ, հեռուն տեսնելու, ընկալելու ոչ մէկ ցանկութիւն ունին: Նոյնիսկ մահը չի կրնար փոխել անոնց ծոյլ ու յուսալքուած շարժումները: Ամբողջ նկարը կատարուած է ճերմակի երանգներով, սակայն այնքան անշունչ է պատկերը, որ լաւատեսութիւն եւ յոյս ներշնչող ճերմակը, չի փրկէր վիճակը: Ցուցարահին յաջորդ պատին անզուսպ ամբօխ է, գուցէ ցուցարարներ, որ տարբեր ուղղութիւններով կը նային եւ իւրաքանչիւրը կը պռռայ, կ'աղաղակէ իր գիտցածը, կամ...

Եւ ասոնց ընկերակցութեամբ՝ հպարտ կեցուածքով, գլուխները բարձր, կեցած են եգիպտահայ արձանագործ Սարգիս Թօսունեանի գոյգ արձանները: Ոսկեփայլ ժապաւէն մը կը պարուրէ արձանները՝ լաւատեսական շունչ մը փոխանցելով դիտողին: Մեծ չէ ժապաւէնին տարածքը,



շար. էջ 6

ԺԻՐԱՅՐ ԲԱՔԱՁԵԱՆ՝ ՀԱՆԴԻՍԱՎԱՐ «ՈՍԿԷ ԾԻՐԱՆ» ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ 9-ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Միջազգային համբալի տիրացած դերասան, բեմադրիչ, բազմաթիւ լեզուներու տիրապետող Ժիրայր Բաքազեան, պատւոյ հրաւիրեալներէն մին էր «Ոսկէ Ծիրան» շարժապատկերի միջազգային 9-րդ փառատօսին, վարելու համար բացման եւ փակման հանդիսութիւնները, որոնք տեղի ունեցան Երեւանի մէջ, Յուլիս 8-15:

«Ես շատ ուրախ եմ, որ փառատօսին տնօրէնը՝ Յարութիւն Խաչատրեան զիս հրաւիրած է: Պատիւ մըն է ինծի համար, որպէս հանդիսավար, խանդավառել այս միջոցառումը: Ինծի համար մարտահրաւեր մը պիտի ըլլայ պահանջած երեք լեզուներով գաղափարներս արտայայտելը եւ մեկնաբանութիւններս հասկընալի դարձնելը»:

Ժիրայր Բաքազեան անծանօթ մը չէ Հայաստանի շարժանկարի եւ թատերական շրջանակներէն ներս: Ան վկայուած է Երեւանի Թատերական եւ Շարժանկարի Ազգային Հիմնարկէն, ելոյթներ ունեցած է ազգային բեմերու վրայ, դերեր ստանձնած շարժանկարներու մէջ եւ վարձատրուած՝ Շարժանկարի եւ Թատրոնի ընկերակցութիւններէն, ինչպէս նաեւ Գրողներու Միութենէն՝ «Երգ Արարատի» (Chant d'Ararat) իր դերակատարութեան համար: Բաքազեան Պատւոյ Անդամ է «Գաբրիէլ Սունդուկեան»ի անուան Հայաստանի Ակադեմական Ազգային Թատրոնին եւ վերջերս իրեն շնորհուած է արուեստի ամենաբարձր գնահատականները՝ մասնաւորաբար «Մովսէս Խորենացի» Նախագահական մետալը, ինչպէս նաեւ ոսկեայ մետալ՝ մշակոյթի Նախարարութեան կողմէ, Հայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձին առիթով:



Որպէս բեմադրիչ, Ժիրայր Բաքազեան ֆրանսերէնի պատշաճեցուցած է Տիգրան Զուհանեանի «Կարինէ» զաւեշտախառն օփերէթը եւ առաջին անգամ ըլլալով զայն բեմադրած՝ Փարիզի «St. Maur» թատրոնին մէջ եւ ապա Մարսիլիոյ «Odeon» թատերասրահին մէջ, 2010-2011 եղանակի բացման հանդիսութեան:

Իր կատարած վերջին երկու այցելութիւնները դէպի Հայաստան, երկու թատերախաղերու ներկայացման առիթով էին: Մին Շէքսպիրի «Սպասելով

Երագին» (Waiting For The Dream), իսկ միւսը՝ Սերվանթեսի «Somewhere... La Mancha»:

Իրեն կ'ընկերակցէր Իրինա Պրուքի դէկավարած թատերախումբը, որուն հիմնադիր անդամներէն մին է ինք: Այդ շրջանին է որ Բաքազեան նկարահանած է Լեւոն Միլասեանի «Դաշնակ» կարճ ժապաւենը, որ բազմաթիւ անգամներ արժանացած է մըրցանակներու:

Իրինա Պրուքի թատերախումբին հետ 7 երկար տարիներու միջազգային փառահեղ իր շրջագայութիւնը վերջացաւ նշանաւոր «Théâtre de Paris»-ի մէջ տուած իր ներկայացումներով, ուր դերեր ստանձնեց երկու թատերախաղերու մէջ: Մին՝ Fabrica Melquiotի «L'Albatros»-ը 2011-ին, իսկ միւսը՝ Alexandre Romaneshի «Terrain Vague»-ը, 2012-ին: Ժիրայր գլխաւոր դերը ստանձնած է նաեւ 2012-ին Միացեալ Թագաւորութեան մէջ արտադրուած «Անցեալ Զմեռ» կարճ ժապաւենին մէջ, զոր բեմադրած է Maeva Poinsignon:

Նշենք որ այս տարի «Ոսկէ Ծիրան» փառատօսի պատուոյ հրաւիրեալներն էին.



շար. էջ 4 էն

Եւ աչք չի շլացներ: Պրոնգաճոյլ են արձանները եւ գերակշռողը գորշ գոյնն է: Արձանները կը խորհրդանշեն մարդկային կեանքի երեք միջոցները: Կարծեցեալ անհոգ եւ ուրախ անցեալը՝ իրաւ թուացեալ է եւ տաղտուկ ու գորշութիւն կայ նաեւ հոն: Ներկան՝ պայծառ է, ոսկեգոյն երազներով ու յոյսերով է լեցուն: Սակայն որքան ալ վարդագոյն ըլլան մարդու անուրջները, տակաւին շուրջը անգոյն է իրականը: Բայց ուրախ ու յուսադրող պայծառութիւն մը կայ, որ դեռ պիտի գայ: Պիտի գայ ու իր ոսկեփայլ շողերը տարածէ ամեն տեսակ խաւարի ու տաղտուկի վրայ, պիտի գունաւորէ մարդու երազները, իրականութիւն պիտի դարձնէ ցնորքները բոլոր... Եւ այդ գալիքը, մարդը ապագայ կը կոչէ: Իսկ երկուորեակ այս արձաններուն հայեացքները դեպի ապագան կը նային եւ ոսկեգոյն փայլով մը կը շողան, կը սպասեն ու կը յուսան...

Եթէ հիւանդասենեակին կերպարները յուսահատ են եւ ապագան չեն տեսներ, կամ խաւար է շուրջը, ապա Ս. Թօսունեանի արձանները իրենք լոյս կը ճառագայթեն:

Եթէ փարաւոնական արձանները ջարդուիշուր ընտղները գլխիկոր են. եւ՛ ափսոս-

սանք կը զգան, եւ՛ ժխտումի գայրոյթ, ապա հպարտ կանգնած այս կերպարները վստահօրէն կը սպասեն գալիքին:

Եթէ գլուխը հագուստներու մէջ սքողած մարդուկ մը կը վախնայ շուրջը դիտել, եւ անոր միայն փողկապը կ'առանձնանայ նկարին մէջ, ապա Ս. Թօսունեանի կերտած կերպարները հաւատքով ու լաւատեսութեամբ կը սպասեն վաղուան: Որովհետեւ վախնալու եւ ամէնալու բան մը չունին եւ շիտակ կանգնած են մարդոց, կեանքին ու ժամանակին դիմաց:

Օժտուած արտասովոր խորաթափանցութեամբ եւ իր արուեստին հզօր ուժով, արուեստագետ Սարգիս Թօսունեան կրցած է այս խառնակ օրերուն մէջ կերտել հայ մարդու լաւատեսութեան յատուկ գործեր: Գործեր, որոնք լաւատեսութեամբ ու հաւատքով կը վարակեն նաեւ շուրջիները: Կը մատնանշեն, որ գորշութիւնն ու խաւարը ժամանակաւոր են: Անոնց մէջ ոսկեփայլ լոյս ու պայծառութիւն մը կայ: Յուսանք եւ սպասենք այդ լոյսին:

Անժիկ Յակոբեան-Կանիմեան

ԺԻՐԱՅՐ ԲԱՐԱԶՔԵԱՆ՝ ՀԱՆԴԻՍԱՎԱՐ...

շար. էջ 5 էն

Իզապել Հիւբեր (Isabelle Huppert), Ակնիեսքա Հոլանտ (Agnieska Holland), որ ներկայացուց իր վերջին շարժանկարը՝ «Մթութեան Մէջ» (In Darkness), պելճիքացի բեմադրիչ եղբայրներ Ժան-Բիէռ եւ Լիւք Տարտեն (Jean-Pierre et Luc Dardenne), իտալահայ եղբայրներ Փաօլօ եւ Վիթթորիօ Տավիանի (Paolo et Vittorio Taviani), Եան Ռէյմոն (Yann Raymond), որ պատասխանատուն էր միջազգային «Uni-France» ֆիլմերու փառատօններու, Եուրի Մեխիթով (Yuri Mechitov)՝ լուսանկարիչ եւ մտերիմ բարեկամ Սերկէյ Փարաճանովի, Զրիստա Մէյնտերսմա (Christa Meindersma)՝ տնօրէնուհի Հոլանտայի «Prince Claus» հաստատութեան:

Այս տարի 70 երկիրներէ ներկայացուած 1120 շարժանկարներէն եւ պաշտօնական մրցոյթին մասնակցող բազմաթիւ բեմադ-

րիչներէն յիշենք Վիքթոր Էրիսը (Victor Erice), Վալերի Մասատեանը եւ Ալեքսանտր Սօքուրովը (Alexandre Sokurov): Երեւանը ԵՌՆԵՍՔՕի կողմէ «Գիրքի 2012-ի Համաշխարհային Մայրաքաղաք» ընտրուելու կապակցութեամբ, «Ոսկէ Ծիրան» փառատօնը որպէս նշանաբան ընտրած էր «Գիրք եւ Շարժանկար»:

Վերջին ժամ:

Շէյքսպիրի «Սպասելով Երագին» թատերախաղը Իրինա Պրուքի ղեկավարութեամբ, որուն գլխաւոր դերը ստանձնած է Բաբազեան, Մոնթրէալի մէջ ընտրուեցաւ որպէս տարուան լաւագոյն ներկայացում:

Թարգմանեց՝ Անայիս Ճիզմէճեան

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ . ԾՆՆԴԵԱՆ 300-ԱՄԵԱԿ



*Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրըն է:
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրըն է:
Բունիաթըս աւազ չիմանաս՝ քարափ է, քարովըրէն է...*

(Ուղղագրութիւնը տրուած է ըստ բնագրի)

Այս տարուայ ընթացքին կը նշուի միջնադարու հայագգի հռչակաւոր բանաստեղծ-աշուղ, իսկ կեանքի վերջին տարիներուն անբասիր հոգեւորական Սայաթ Նովայի (Յարութիւն) ծննդեան 300-ամեակը, որուն անդրադարձած է նաեւ ԵՌԻՆԵՍԺՕ՝ իր յոբելեական տօնակատարութիւններու կարգին ընդգրկելով անոր անուը:

Հայաստանի եւ Վրաստանի մէջ հայերը ամէն տարի աւանդաբար այդ յոբելեանը կը նշեն «Վարդատօս» կոչւող ձեռնարկով մը, որ կը նուիրուի աշուղական երգի ռահվիրային:

«Վարդատօս»ը առաջին անգամ կազմակերպուած է 1914 թուականին, Թիֆլիսի մէջ, մեծն Յովհաննէս Թումանեանի եւ գեղանրկարիչ Գեորգ Բաշինջաղեանի նախաձեռնութեամբ՝ Սայաթ Նովայի ծննդեան 200-ամեակը նշելու համար: Անկէ վերջ, ամէն տարի, Մայիսի վերջին Կիրակին նըշեալ տօնը աւանդաբար նշուած է իբրեւ մեծ աշուղին նուիրուած յիշատակի օր: Այդ օր, Թիֆլիսի Ս. Գեորգ եկեղեցւոյ բակին մէջ, տօնին մասնակիցները խորհրդանշական մէկական վարդով այցելած են Սայաթ Նովայի շիրիմը, տուրք մատուցած անոր յիշատակին՝ անգամ մը եւս յիշեցնելով, թէ մեծ աշուղը շատ կարեւոր դերակատարութիւն ունեցած է հայ գուսանական երգարուեստի պահպանման ու գոյատեւման ազգանուէր գործին մէջ:

Ներկայիս, Մայիսի նախաՎերջի Կիրակին, «Վարդատօս» կը կազմակերպուի նա-

եւ Երեւանի մէջ: Այդ մասին՝ «Սայաթ Նովա» աշուղական երգի վաստակաւոր խումբի գեղարուեստական ղեկավար, «Սայաթ Նովա» մշակութային միութեան նախագահ, ժողովրդական արուեստագետ, Փրոֆ. Թովմաս Պօղոսեան հետեւեալը յայտարարած է.

«Արդէն ուր տարի շարունակ, «Սայաթ Նովա» մշակութային միութեան նախաձեռնութեամբ (հիմնադիր Թովմաս Պօղոսեան-խմբ.), մշակոյթի նախարարութեան ու Երեւանի քաղաքապետարանի աջակցութեամբ, ամէն տարի 20 Մայիսին աւանդական «Վարդատօս» կը կազմակերպուի:

...Սայաթ Նովան մեր ժողովորդի այն մեծութիւնն է, որու իւրաքանչիւր տարին տօն պետք է ըլլայ: Այս աւանդոյթը որպէս սրբութիւն, կը պահպանուի ամբողջ տարին»:

Ընթացիկ տարուան «Վարդատօս»ին առթիւ կազմակերպուած ձեռնարկներու ծիրէն ներս, դպրոցականներ, մտաւո-

րականներ, մեծ աշուղի երգերու երկրպագուներ՝ մէկական վարդեր ի ձեռին՝ Սայաթ Նովայի երգերը հնչեցնելով, նախ քայլարշաւով անցած են Սայաթ Նովա փողոցէն, այնուհետեւ միացած են Սայաթ Նովայի անուան երաժշտական դպրոցի եւ Կոմիտասի անուան երաժշտանոցի յարակից այգիին մէջ՝ մեծ քնարերգուի յուշադրիւրին մօտ հաւաքուած քաղաքացիներուն: Հոն հնչած են անգուգական աշուղին ստեղծագործութիւնները՝ անուանի ժողովրդական երգիչ-երգչուհիներու եւ գուսանական-ժողովրդական համոյթներու մեկնաբանութեամբ, համերգային յայտագրով մը հանդէս եկած է «Սայաթ Նովա» նուագախումբը:

շար. էջ 22



«Վարդատօս»ը Երեւանի մէջ



ՀԱՅՈՑ ՀՄԿԱՆ՝ 810-ԱՄԵԱՅ «ՄՇՈՅ ՃԱՌ-ԸՆՏԻՐ»Ը

1915 թուին հայ ժողովուրդին հետ բարբառոս թուրքերու կողմէ ջարդի ենթարկուեցաւ նաեւ հայ գիրքը. բազմաթիւ ձեռագրեր զոհ գացին աւերին ու ասպատակութիւններուն: Յայտնի չէ բոլոր ոչնչացուած մատեաններու թիւը, սակայն, որոշ տուեալներու համաձայն, անոնց թիւը կը հասնի մի քանի հազարի: Հայ մտաւորականութեան ջանքերով Արեւմտեան Հայաստանի տարածքին գտնուող ձեռագրերու որոշ մաս մը փրկուած է:

Բարեբախտաբար, այդ ջարդէն ազատած է նաեւ հայերէն ամենամեծ մագաղաթեայ ձեռագիր մատեանը՝ «Մշոյ ճառքնտիր»ը, որուն նմանը չկայ ամբողջ աշխարհի տարածքին:

Հայրենասիրութեան եւ գիրքի հանդէպ տածած մեծ սիրոյ բացառիկ օրինակ մըն է երկու հայուհիներու պատմութիւնը, որոնք Յեղասպանութեան ժամանակ, թուրքերէն փախչելով կը պահուըտին Ս. Առաքելոց վանքին աւերակներուն մէջ եւ յանկարծ փլած պատերուն տակ կը տեսնեն այս արժեքաւոր ձեռագիրը եւ, հակառակ շրջապատող վտանգներուն, կ'որոշեն իրենց հետ առնել ու կորուստէ փրկել զայն: Եւ քանի որ գիրքը շատ ծանր էր (28 քիլօ կը կշռէ, առանց կողքին), զայն կը կիսեն երկու մասերու եւ իւրաքանչիւրը մէկ կ'ետը շալկելով ճամբայ կ'ելլէ դէպի Արեւելեան Հայաստան:

Որոշ ժամանակ անց հսկային մէկ կ'ետը կը հասցուի Թիֆլիսի Հայոց Ազատագրական Ընկերութիւն, ապա կը բերուի Երեւան:

Տարիներ շարունակ ոչ ոք կը գիտնայ միւս կէտին տեղը: Վերջապէս կը գիտցուի որ հսկային երկրորդ կ'ետը թաղուած է Երզրում քաղաքի հայկական եկեղեցւոյ բակին հողին տակ: Եւ երկար տարիներու բաժանումէն վերջ, այս նշանաւոր մատեանին երկու կէտերը դարձեալ միանալով՝ իրենց ապահով եւ արժանի տեղը կը գրաւեն Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ:

Իսկ ի՞նչ կը ներկայացնէ այսքան մեծ հրռչակ վայելող հսկայ ձեռագիր մատեանը:

Հայ գրչութեան եւ մանրանկարչութեան փառապանծ գործերէն՝ «Մշոյ ճառքնտիր»-ը, իր մէջ կը պարունակէ ճառեր, վարքեր, վկայաբանութիւններ, պատմական քաղաքներ եւ ներքողներ՝ դասաւորուած տարրուան տօ-



Հայոց հսկան եւ «թզուկը»՝ լուցկիի մեծութիւն ունեցող ամենապզտիկ գիրքը

ներուն համապատասխան, որուն համար ալ ան նաեւ «Տոնական» անունը ստացած է:

Ան գրուած ու ծաղկուած է 1200-1202 թըւականներուն, Երզնկայի Աւագ վանքին մէջ, Բաբերդի տանուտէր Աստուածատուրի պատւերով: Մատեանին գրիչն է Վարդան քահանայ Կարնեցի, իսկ ծաղկողը՝ Ստեփանոս: Սկզբնական շրջանին մատեանը ունեցած է 660 էջեր (չափերը՝ 55.5 x 70 սմ), իւրաքանչիւր էջ պատրաստուած է մէկ երկնջի կաշիէ:

Մատեանին բացառիկ արժեքը ժամանակին հասկցած են նաեւ օտարները. մատեանին ծաղկումը աւարտելու տարին իսկ, Բաբերդի սելճուք դատաւորը կը յափշտակէ զայն տիրոջմէն եւ երկու տարի հալաթի մէջ թաքցնելէ յետոյ՝ 1204-ին, 4000 արծաթեայ դրամով կը ծախէ Մշոյ Առաքելոց վանքին: Դրամահաւաք կազմակերպելով, մատեանին փրկագինը կը վճարեն շրջակայքի բնակիչներն ու վանքին միաբանները եւ մինչեւ 1915 թ.՝ 711 տարիներ շարունակ հսկան հոն կը մնայ:

Ներկայիս Մատենադարանին մէջ գտնուող «Մշոյ ճառքնտիր»-ը ունի 601 էջեր, իսկ 17 էջեր կը պահուին Վենետիկի եւ 42 էջեր՝ Մոսկուայի մէջ:

Յաւօք սրտի, մեզի անյայտ մնացած են այդ երկու, իրապէս, հերոսուհիներու անուններն ու անոնց հետագայ ճակատագիրները:

«Մշոյ ճառքնտիր»-ը մեր ազգին հպարտութիւնն է եւ մեծ հետաքրքրութիւն կը յառաջացնէ նաեւ Մատենադարան այցելող բազմաթիւ օտարներու մօտ՝ իբրեւ մշակութային բացառիկ գործ մը: Վերջերս հանրութեան ուշադրութիւնը առաւելաբար սեւեռուեցաւ անոր վրայ, երբ Հայ Գրատպութեան 500-ամ-

եակին եւ «Երեւանը Գիրքի 2012-ի Մայրաքաղաք» հռչակուելու տօնակատարութիւններու ծիրէն ներս, Երեւանի կեդրոնին մէջ բացումը կատարուեցաւ ֆրանսաքնակ քանդակագործ Դաւիթ Երեւանցիի կերտած «Վարք Յաւերժութեան» անուանը կրող, երեք մեթրանոց պրոնզաձոյլ արձանը (որուն մասին տեղեկացուցած էինք մեր նախորդ թիւին մէջ):

Յուշարձանը, որուն ճարտարապետն է Ռուբէն Հասրաթեան, ձուլուած է Բրակայի մէջ, ռուսահայ գործարար Արթուր Ջանիբեկեանի հովանաւորութեամբ, ոչ միայն կը խորհրդանշէ մեր ազգին հերոսական անցեալն ու գիրքին հանդէպ ունեցած սերն ու նուիրումները՝ իբրեւ հայոց հաւատքի առհաւատչեայ, այլեւ կոչուած է մեծարելու նաեւ հայ կինը՝ ազգային մշակութային ժառանգութիւնները պահպանելուն համար:

Լրագրողներու հետ ունեցած զրոյցի ժամանակ, Դաւիթ Երեւանցի նշած է, թէ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան պատուիրած է արձանը եւ որ ան կերտելու ընթացքին, ինք ոգեշնչուած է Եղիշէ Զարեանցի ստեղծագործութիւններէն եւ միասնութեան մասին անոր յայտնած գաղափարէն, ինչպէս նաեւ հայ կնոջ գեղեցկութենէն ու բացառիկութենէն: «Այսօր հայ ժողովուրդը վերածնունդ մը կ'ապրի.... Ես կը ցանկանամ, որ այս արձանը իմ ժողովուրդիս համար հաւատքի խորհրդանիշը դառնայ», - յայտնած է քանդակագործը:

Դաւիթ Երեւանցիի, Հայոց Յեղասպանութեան նուիրուած շատ մը յուշարձաններ տեղադրուած են ոչ միայն Փարիզի եւ շրջակայ արուարձաններուն (որոնցմէ ամենէն նշանաւորը Կոմիտասի արձանն է), այլեւ աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Իսկ Երեւանի մէջ նշանաւոր է անոր 2009 թուականին հեղինակած Ուիլիլմ Սարոյեանի յուշարձանը:

Սփիւռքի մէջ հայ մշակոյթի տարածման նպաստող գործունեութեան ու այդ բնագաւառէն ներս ձեռք բերած նուաճումներուն եւ ձեռքբերումներուն համար, Յունուարին Դաւիթ Երեւանցի պարգեւատրուեցաւ ՀՀ Սփիւռ-

քի նախարարութեան «Ուիլիլմ Սարոյեան» մետալով:

Հայկական ամենամեծ ձեռագիրը փրկող երկու հայուհիներու պատմութիւնը ներշնչած ու ոգեւորած է նաեւ իտալահայ անուանի գրող, հնագիտութեան մագիստրոս, Փատովայի համալսարանի ժամանակակից իտալական գրականութեան փրոֆեսոր, Հորտիամի համալսարանի յատուկ հրաւիրեալ դասախօս Անթոնիա Արսլանը: Յունուարին լոյս տեսած է անոր վերջին գիրքը՝ «Մշոյ Գիրք» խորագրով, որ նուիրուած է մատենի փրկութեան պատմութեան եւ երեք ամսուան ընթացքին հրատարակուած՝ չորս լեզուներով (կը նախատեսուի այս գիրքը թարգմանել նաեւ հայերէնի):

Մեծ է Արսլանի աւանդը Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացին մէջ. նշենք որ «Մշոյ Գիրք» վեպը անոր՝ Հայոց Յեղասպանութեան թեմայով գրած երրորդ գիրքն է: Առաջինը եղած է «Արտոյտներու Ագարակը», որուն հիման վրայ իտալահայ շարժապատկերահան Տավիանի եղբայրները նկարահանած են համանուն շարժանկարը:

Երկրորդը՝ «Չմիւռնիայի ճանապարհը» հատորը, «Ար-

տոյտներու Ագարակը» վեպին շարունակութիւնն է, որ կը ներկայացնէ հեղինակին մեծ պապին յետնորդներու՝ Աւագեաններու պատմութեան շարունակութիւնը:

Ապրիլին Հայաստան ժամանած Անթոնիա Արսլան մասնակցեցաւ իր առաջին երկու վեպերու հայերէն հրատարակութիւններու շնորհանդէսին եւ ստացաւ ՀՀ նախագահին կողմէ իրեն շնորհուած «Մովսէս Խորենացի» մետալը՝ գրականութեան մէջ իր ունեցած աւանդին եւ արձանագրած մեծ ձեռքբերումներուն համար: Իր շնորհակալական խօսքին մէջ գրողը նշած է, թէ ասիկա Հայաստան կատարած իր առաջին այցելութիւնը չէ եւ ինքզինքը Հայաստանէն մասնիկ մը կը զգայ:



Դաւիթ Երեւանցի կը պարգեւատրուի «Ուիլիլմ Սարոյեան» մետալով



Անթոնիա Արսլան Երեւանի մէջ

Պատրաստեց՝ Շաքէ Մարգարեան



ՀԱՅՈՑ ԾԻԱԾԱՆԻ ԵՐԿՈՒ ԵՐԱՆԳ՝ ԳԱՔՐԻԷԼ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶԵԱՆՆԵՐ

Ստորել կը ներկայացնենք արուեստաբան Շահէն Խաչատրեանի յօդուածը Այվազեան (Այվազովսքի) եղբայրներու մասին, որոշ յապաւումներով եւ մեր կողմէ տրուած յաւելուածով:

«Տ»



Ինքնադիմանկար

Այս տարի, Մայիս 10-ին լրացաւ հայ հոգեւոր աշխարհի նուիրեալ, 19-րդ դարու յայտնի մտաւորական, Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանի (Այվազովսքի) ծննդեան 200-ամեակը: Ան իր կրթութիւնը ստացած է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան

մէջ եւ տիրապետած է տասը լեզուներու. եղած է պատմաբան, գրող, թարգմանիչ, հրատարակիչ...: Փարիզի եւ Թեոդոսիայի մէջ հիմնած է կրթօճախներ, ընտրուած է Էջմիածնի Գեորգեան ճեմարանի տեսուչ եւ լոյս ընծայած է դասագիրքեր: Անոր կեանքը եղած է նուիրում մը՝ ազգային ոգիի դաստիարակման ուղղութեամբ, որուն համար ալ անուանուած է լուսաւորութեան առաքեալ:

Ահա երկու ասոյթ իր գրութիւններէն.

«Մեր ազգին ներկայ եւ ապագայ երջանկութեան համար փափաքելի բաներ շատ կան, բայց ամենուն ալ գլուխ պետք է սեպել միաբանութեան հոգին, գիտնալով, որ իր անցեալ եւ այժմու թշուառութեանցն ալ գըլխաւոր պատճառը՝ անմիաբանութիւն եղած է»:

«Եթէ մէկ բան մը կայ աշխարհիս վրայ, որ մարդու մէջ ինչ ազգէ ըլլալը յայտնի կը դարձնէ ամէն տեղ եւ ամէն ատեն, իր ազգին լեզուն է. եթէ ազգ մը իր լեզուն կը պահէ, ազգութիւն չի կորսնցներ»:

Գաբրիէլ Այվազեանի անսպասելի վախճանէն՝ 1880-էն յետոյ, առաջին անգամ ըլլալով Էջմիածնի մէջ լոյս պիտի տեսնէ անոր գրական ու թարգմանչական ընտրեալ գործերու ժողովածուն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի խորհուրդով եւ օրհնութեամբ:

* * *

Որպէս արուեստաբան, տարիներ շարունակ ինքս զբաղած եմ Գաբրիէլի կրտսեր եղբոր՝ Յովհաննէս Այվազովսքիի արուեստով եւ աշխատելով Ազգային Պատկերասրահին մէջ, գտած ու թանգարան տեղափոխած եմ «Նոյն Կ'իջնէ Արարատէն», «Պայրոնի Այցը Մխիթարեաններուն» եւ «Երեկոյ Սուրբ Ղազար Կղզիին Մէջ» սքանչելի նկարները, որոնք հնարաւորութիւն տուին ծովանկարիչը ներկայացնել հայկական արուեստի բաժնին մէջ: Իսկ 1979-ին Թեոդոսիայէն ու այլ քաղաքներէ բերուած Այվազովսքիի հայկական նկարներու ցուցահանդէսը բացուեցաւ Սարեանի թանգարանին մէջ, ուր ի թիւս տասնեակ այլ գործերու, կնոջ՝ Աննա Բունազեանի, եղբոր՝ Գաբրիէլի, Խրիմեան Հայրիկի հիանալի դիմանկարներն ու կրօնական այլ գործեր կ'առիւնքնէին դիտողները: Կես տարի գործող այդ ցուցահանդէսը ներշնչող վկայութիւն մը դարձաւ երկու եղբայրներու ազգանուէր գործունեութեան:

1840-ին, իրարու կարօտցած եղբայրները առաջին անգամ տեսնուեցան Վենետիկի մէջ: Շնորհիւ Գաբրիէլի, կարծեք իբրեւ Փեթերսպուրկի ուսումնառութեան շարունակութիւն, Յովհաննէս ծանօթացաւ միջնադարեան հայ մշակոյթին, անոր հոգեկանչ եութեան, ինչպէս նաեւ մանրանկարչութեան գոյներու երգող գեղեցկութեան: Հոս էր, որ անոնք որոշեցին հանել իրենց մականունին սկիզբի «Յ»-ին եւ հանրութեան ներկայանալ թէ՛ իբրեւ Այվազեան, թէ՛ իբրեւ Այվազովսքի:

Մխիթար Սեբաստացիի երազանքին՝ մայր ժողովուրդի հոգեւոր վերելքի հաւատարմատար Գաբրիէլի ապրումներով, ներշնչուեցաւ նաեւ Յովհաննէս: Ընդամենը տարի մը անց՝ 24 տարեկանին, ան ստեղծեց

Եւրոպայի մէջ արդէն տարածուած ռոմանթիզմին արձագանգող եւ ոսկէ մետալի արժանացած «Զառն. Աշխարհի Արարումը» նկարը, ուր Աստուած կերպաւորուած է իբրեւ լոյս՝ նմանող խաչի...:

Յովհաննէսի՝ եղբօր հետ հանդիպման առաջին արձագանգներէն կը հանդիսանայ նաեւ վերջալոյսին պատկերուած Ս. Ղազար կղզիին, 1843-ին Լուվրի մէջ ցուցադրուած նկարը: Կտաւին կառուցւածքային կեդրոնն է մտայղացւած քարափին դրուած կարմիր կողքով գիրքը՝ նշանաւոր «Հայկազեան Բառարանը», որուն աջ կողմը նըստած է բառարանին հեղինակներէն մէկը, Պայրոնին հայերէն ուսուցանած Յ. Աւգերեան, իսկ ձախ կողմը կանգնած է բառարանին ակարտմանը օգնած նկարիչին եղբայրը: Առաջին հայեացքէն կղզին իր ուրուագիծով լոյսի մէջ լողացող նաւ մը կը յիշեցունէ, իսկ մարդիկ՝ յոյսի ու երագի ճամբորդներ:

Յովհաննէս ու Գաբրիէլ մշտապէս հաւատարիմ մնացին իրենց ժողովուրդի կեանքին աջակցող լոյսին: Այժմ անդրադառնանք երկար ժամանակ անպատասխան մնացած հարցի մը: 1901-ին, Ս. Փեթերսպուրկի մէջ լոյս ընծայւած շքեղ գիրքի մը առաջին էջին վրայ գրուած է, թէ Յովհաննէսին հայրը մահմետականի մը զաւակը եղած է եւ Բենտեր բերդի գրաւման ժամանակ փրկուած է հայ մարդու մը՝ Գրիգոր Այվազի կողմէ: Ապա յաւելուած է. «Մահմետական արեւելքը՝ Ռուսաստանի հանդէպ իր ողջ ատելութեամբ հանդերձ, անոր պարգեւած է երկու պոետ՝ Ժուքովսկի ու Պուշկին եւ մէկ նկարիչ՝ Այվազովսքի»:

Յիշենք որ 1770-ին ռուսական բանակին կողմէ Քիշինեւի մօտ գտնուող Բենտերի գրաւման մասին Գաբրիէլ անդրադարձած է իր «Օսմանիայի Պատմութիւն» երկհատոր գիրքին մէջ (Վենետիկ, 1841): Եթէ ճշմարիտ ըլլար այդ ահեղ կռիւին ժամանակ իրենց «մանուկ հօր փրկութեան» պատմութիւնը, անշուշտ հեղինակը կը նշէր այդ մասին, իսկ

եթէ 20-րդ դարասկզբին արքեպիսկոպոսը ողջ ըլլար, կարելի է պատկերացնել թէ ինչպէս կ'արձագանգէր այդ զեղծարարութեան:

Որպէս ստոյգ պատասխան այս տեսակ սուտերուն, բաւական ուշ յայտնուեցան արխիւներու մէջ պահուող երկու եղբայրներուն հայագիր նամակները, ինչպէս նաեւ Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մատեանին մէջ նկարիչին ծննդեան՝ «Կոստանդին Այվազեանի որդի Յովհաննէս» գրառումը Տեր Մկրտիչի կողմէ:

Վերջերս ռուս արուեստաբաններէն ոմանք արդէն համոզուած կը գրեն հռչակաւոր ծովանկարիչին հայկական ծագումին մասին: Նշենք միայն 2010-ին Մոսկուայի մէջ կազմակերպուած «Ծիածանի Երկու Երանգ. Չոյգ Ազգերու ճակատագիր» խորագիրը կրող ցուցահանդէսի քաթալոկի յառաջաբանին մէջ Պուշկինի անուան թանգարանի տնօրէն, ակադեմիկոս Ի. Անթոնովայի եզրակացութիւնը. «Այվազովսքին համազօր յաջողութեամբ կարելի է համարել ե՛ւ ռուս ե՛ւ հայ նկարիչ»:

* * *

Վատիկանի կողմէ Միսիթարեան Միաբանութեան գործունեութեան ճնշումին եւ այլակերպումին պատճառաւ, Գաբրիէլ Այվազեան Փարիզ կը հեռանայ, ապա կը դառնայ Էջմիածնական, կ'աշխատի որպէս մանկավարժ եւ կը հրատարակէ «Մասեաց Աղաւնի» սիրուած հանդէսը: Եղբօրը հետ հանդիպելով Յովհաննէս կը գրէ. «Ես երջանիկ եղայ, երբ 1857-ին Փարիզի մէջ գտայ նրան, գտայ նրան որպէս լուսաւորչահայ վարդապետ»: Իսկ Գաբրիէլ տեղի ունեցածին կապակցութեամբ, իր նոր լոյս ընծայած գրքոյկի յառաջաբանին մէջ, այսպէս դիմած է եղբօր. «Անձկաւետ հարազատ իմ Յովհաննէս... Խնդիրը դժուարին էր եղբայր, իմ անյիշաչար բնաւորութեանս ու խաղաղասէր զգացմանս շատ հակառակ... Ընդունէ ուրեմն սիրով այս գրքոյկը եւ եթէ սիրելի ազ-



Նոյն Կ'իջնէ Արարատէն



Պայրոնի Այցը Միսիթարեաններուն



գերնուս խրատ եւ յօգուտ մը ըլլայ ասոր ընթերցումէն, ինչպէս որ կը յուսամ, դուն ալ արժանապէս մխիթարուիր եւ ուրախացիր...»:

Ընդունելով եղբոր առաջարկը, Գաբրիէլ անոր հետ Փարիզէն մըշտապէս ծննդավայր կը վերադառնայ: Եռանդուն կը գործէ եկեղեցւոյ եւ նորակառոյց Խալիպեան դպրոցէն ներս:

Եղբոր հետ Թեոդոսիայի մէջ ապրելով, Յովհաննէս կրկին կը ստեղծէ պատմակրօնական գործեր, որոնցմէ «Տիեզերք. Կեանքի Նախաարարումը Երկրագունդին Վրայ» մեծադիր կտաւը յետագային կ'ընծայուի Խրիմեան Հայրիկին: Ցաւօք, Երեւանի Ազգային Գրադարանին մէջ պահուող այդ նկարը 1990-ին կ'անյայտանայ:

Գաբրիէլ 1860-ականներու վերջերուն Էջմիածին կը կանչուի, արքեպիսկոպոս կ'օծուի, ապա Վրաստանի մէջ առաջնորդ կը նշանակուի:

1880-ին յանկարծամահ եղած առաջնորդին շիրիմը, 1950-ականներուն կը վերացուի, իսկ աճիւնը կը փոխադրուի Թիֆլիս ու կը թաղուի Ս. Գեորգ եկեղեցւոյ բակին մէջ:

* * *

Էջմիածնի Մայր Աթոռին մէջ լոյս ընծայուող Գաբրիէլ Այվազեանի «Ընտրանի»-էն կը զգացուի, որ մայրենի դարաւոր լեզուի հաւատարմատարը աշխատած է նաեւ նոր կեանք մտած աշխարհաբարով, սակայն ոճով եւ ուղղագրութեամբ աւելի հարազատ մնացած է գրաբարին: Արմատներով անցեալին կապուած անոր կեանքին ընթացքը ոչ միայն առնչուեցաւ փոփոխուող լեզուին, այլեւ հասարակութեան մէջ արդէն յայտնուող պայքարատենչ, յեղափոխական ոգիով առաջնորդողներուն: Եւ նման անձերու կողմէ, որպէս քրիստոնէայ գործիչ, Գաբրիէլ նաեւ կը քննադատուէր եւ... մոռացութեան կը մատնուէր: Ան պատասխաններ գրած է իրեն ցաւ պատճառած գրութիւններուն, թարգմանած է նաեւ ուշագրաւ յօդուած մը, որ կը սկսի հետեւեալ նախադասութեամբ. «Կուսակցութեան ոգին քիչ խելօք մարդկանց հոգին է: Ատիկա այնպիսի ցաւ մըն է, որմէ բեկուիլը ամենադժուար բանն է»:

Արդիաշունչ ու հոգեմօտ գրական ժառանգութեամբ Գաբրիէլ Այվազեան իր եղբոր նման հայ մշակոյթի բարձրատան գոյակցողներէն մին է, իբրեւ բարեսիրտ ու ազգապաշտ ստեղծարար մը:



Եղբոր՝ Գաբրիէլ
Այվազեանի Դիմանկարը



Կնոջ՝ Աննա Բուռնազեանի
Դիմանկարը



Քառս.
Աշխարհի Արարումը



Խրիմեան Հայրիկ

Շահէն Խաչատրեան - «Նոր Օր»
Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ. Մ.



Տիեզերք. Կեանքի Նախաարարումը
Երկրագունդին Վրայ



Երեկոյ Սուրբ Ղազար Կղզիին Մէջ



ՅԱՒԵԼՈՒԹՅՈՒՆ

17 Յունիսին լրացավ ականաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի ծննդեան 195 ամեակը: Յովհաննէս ծնած է 1817-ին. 19-րդ դարու սկիզբը Խրիմի Թեոդոսիա քաղաքը հաստատուած հայ առեւտրականի մը՝ Կոստանդին Յայվազովսքիի երկրորդ որդին էր ան:

Նախնական կրթութիւնը Յովհաննէս ստացած է իր ծննդավայրի ծխական դպրոցին մէջ, ապա աւարտած է Ուքրանիայի Սիմֆերոպոլ քաղաքի երկրորդական «Կիմնագիւղ» վարժարանը, իսկ հետագային ոսկէ մետալով՝ Ս. Փետրսպոլիի Գեղարուեստի Ակադեմիան, որմէ վերջ ան գործուղուած է արտասահման՝ կատարելագործելու համար իր արուեստը եւ վերադարձած արդէն իբրեւ հռչակաւոր ծովանկարիչ: Երիտասարդ տարիքին Յովհաննէս եղած է եւրոպական շարք մը ակադեմիաներու անդամ, եղած է Ռուսական Կայսրութեան պատուաւոր ծովակալ, Ռուսիոյ կայսերական ակադեմիայի անդամ եւ արժանացած՝ ֆրանսական Պատուոյ Լեգէոնի շքանշանին:

Այվազովսքի նաեւ լաւ երգած ու ջութակ նուագած է: Ռուս մեծ երաժշտահան Մ. Կլինքա, լսելով եւ շատ հաւնելով անոր երգերն ու մեղեդիները, անոնցմէ քանի մը հատը ներառած է իր «Ռուսլան եւ Լուտմիլա» օփերային մէջ (որոշ վերամշակումով):

1845-ին Յովհաննէս վերադարձած է իր հարազատ, հայաշատ Թեոդոսիա քաղաքը, տուն-արուեստանոց մը շինած է ծովուն ափը եւ մինչեւ կեանքին վերջը ստեղծագործած է հոն: Ան հռչակաւոր է իր ծովանկարներով, որոնք՝ իր մօտաւորապէս 6000 ստեղծագործութիւններուն կէտը կը կազմեն:

1900ի Մայիս 5-ին, երբ ուղեղի արիւնախրումով՝ վրձինը ձեռքին մէջ բռնած, վերջ գտաւ հանճարեղ հայուն կեանքը, ամբողջ Թեոդոսիան զինուորական մեծ շուքով կատարուած յուղարկաւորութեամբ մը, հայոց Ս. Սարգիս եկեղեցւոյ բակին մէջ, յաւիտեանական փառքի պատուանդանին արժանացուց Յովհաննէս Այվազեանը: Անոր տապանաքարին վրայ հայերէնով գրուած է Մովսէս Խորենացիի «Յայոց Պատմութիւն» գործէն քաղուած թեւաւոր խօսքը. «Մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող»:

Անուանի ծովանկարիչը ամբողջ կեանքին ընթացքին սերտօրէն կապուած մնաց հայ ժողովուրդին եւ ապրեցաւ անոր ցաւերով: 1890-ական թուականներուն Թուրքիոյ մէջ տեղի ունեցած հայկական կոտորածներէն ցնցուած, Յովհաննէս՝ հայրենիք յղած իր նամակներէն մէկուն մէջ հայերէնով գրած է. «Խորին կսկիծով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսուած, չտեսնուած կոտորածով»:

Իր ժողովուրդի վիշտին հաղորդակից մեծ ծովանկարիչի մասին կենսագիրները կը պատմեն հետեւեալը. «Առաւօտ մը ութսունամեայ Այվազովսքի կ'արթննայ ծանր զգացումով մը: Սենեակին մէջ քանի մը անգամ դառնալէ յետոյ, կ'առնէ Սուլթան Ապտիլ-Ազիզին կողմէ իրեն շնորհուած ոսկեայ շքանշանները, մետալները եւ ադամանդակաւ թանկարժէք ծխախոտատուփը ու իր հաւատարիմ շունին՝ Ռէքսին հետ ծովափ կ'երթայ, մինչ Թեոդոսիոյ ամբողջ բնակչութիւնը կը հետեւի այդ մեծ մարդուն: Ափ հասնելով՝ նկարիչը շքանշանները կը կախէ շունին պարանոցէն, նաւակ կը նստի եւ բաւական հեռանալով ափէն՝ կը հանէ զանոնք ու կը նետէ ծով: Յետոյ կը ստիպէ շունին լողալ ծովուն մէջ, որպէսզի հաւատարիմ կենդանին եւս մաքրուի այդ աղտէն: Ապա լուալով իր ձեռքերը՝ Այվազովսքի ափ կը վերադառնայ, լռիկ կ'անցնի ապշահար ամբոխին մէջէն, արուեստանոց կը մտնէ եւ կը սկսի նկարել:

Յաջորդ առտուն անոր արուեստանոցին պատէն կախուած էր «Յայ ժողովուրդի Զարդը Տրապիզոնի Մէջ» անմահ կտաւը»...

Այվազովսքի եղած է Խրիմի հայկական գաղթօճախի հովանաւորը. Թեոդոսիայի մէջ ան բացած է գրադարան, հնագիտութեան թանգարան, համերգասրահ, պատկերասրահ եւ գեղարուեստի դպրոց մը: Անոր երազանքն էր համախմբել աշխարհի տարբեր ծագերը ցրուած հայ նկարիչները:

«Տ»



BARON EMPAIN-ի ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՒԱՏՆԵՐԸ



Baron Empain եւ իր ընտանիքը

Երկու Empain պալատներ՝ մեկը շինուած Գահիրէի արուարձան Զելիոպոլսոյ մէջ 1911-ին, իսկ միւսը՝ Պրիւքսէլի մէջ 1930-ին, հետաքրքրական գուգադիպութեամբ, 21-րդ դարու սեմին կը թօթափեն իրենց վրայէն տարիներու զանցառութեան ու

անփութութեան թանձր վարագոյրը եւ վերակենդանանալով կը դառնան Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ մշակութային երկխօսութեան կեդրոն մը՝ շնորհիւ Պօղոսեան Ֆոնտին: **

Յունուար 1904-ին, Զնդկաստանէն եկող Նաւը Եգիպտոս կը հասցնէ պելճիքացի ճարտարապետ, տնտեսագետ, գործարանատէր եւ «սիրողական» եգիպտաբան, միլիոնատէր Edouard Louis Joseph Empainը (20 Սեպտեմբեր 1852 - 22 Յուլիս 1929), որ Ֆրանսայի թագաւորէն Baron տիտղոսը ստացած էր՝ Փարիզի մեթրոյի հիմնադրութեան մէջ իր տքնաջան աշխատանքով մեծ ճանաչում ձեռք բերած ըլլալուն համար (ուր ան կ'աշխատէր իբրեւ չվճարուող ճարտարապետ): Զասարակ ուսուցիչի մը՝ Francois Julien Empainի գաւակ Edouard Empain իր երկրին մէջ իրագործած էր բազմաթիւ ճարտարապետական ծրագրեր եւ տիրացած՝ խոշոր գումարներու: Այդ ծրագրերու գագաթնակէտը կը նկատուէր 1881-ին Պրիւքսէլի մէջ կառուցած իր անձնական դրամատունը՝ Banque Empain, որ հետագային դարձաւ Պելճիքական ճարտարարուեստական Դրամատունը («Banque Industrielle Belge»):

Baron Empain շատ կը սիրէր ճամբորդել. բազմաթիւ երկիրներ ճամբորդելէ յետոյ, սիրահարած ըլլալով Արեւելքին, ան երկար տարիներ բնակութիւն կը հաստատէ գեղեցկու-

թեան եւ հրաշալիքներու երկիր Զնդկաստանի մէջ: Անչափ սիրելով եւ գիտակ ըլլալով դիցաբանութեան, խորհրդաւոր բնաւորութեան տէր Baronը կ'որոշէ փնտռել ամենահին պատմական վայրը եւ կ'ուղղուի դէպի հնագոյն քաղաքակրթութեան օրրան Եգիպտոս: Ան այնքան կը սիրէ Եգիպտոսը, որ կ'որոշէ մինչեւ իր մահը ապրիլ այս երկրին մէջ եւ Նոյնիսկ իր կտակին մէջ կը գրէ, որ մահէն ետք ինք կ'ուզէ թաղուիլ Եգիպտոսի փողիներուն տակ:

Եգիպտոս հաստատուելով, Edouard Empain 1905-ին խիզախ հեռատեսութեամբ մը խթանած, կը ձգտի արուարձան մը ստեղծել Գահիրէէն 10քմ հեռու, Ապասիէյի անապատին մէջ, պատմական Օն քաղաքի աւերակներէն ոչ շատ հեռու:

Օրուան Խտիւ Ապաս Զելմիի արտօնութեամբ ու իր «եգիպտացի» գործակից Պօղոս Նուպար Նուպարեանի միջնորդութեամբ, 20 Մայիս 1905-ին Եգիպտոսի կառավարութիւնը օրինական փոխանցումով 2.500 ֆետտան կը ծախէ, (ֆետտանը մէկ Ե.Ռ.ի), Empainի հիմնած Oasis du Desert de l'Abassie ընկերութեան: Շուտով ընկերութեան անունը կը փոխուի Cairo Electric Railways and Heliopolis Oases Company-HOCի:

Շնորհիւ մեծածաւալ շինարարական աշխատանքներու, անապատը աստիճանաբար կը կերպարանափոխուի ու լայն պողոտաներ, շքեղ շէնքեր, մենատուններ, ձիարշաւարան, եկեղեցիներ ու մզկիթներ տեղ կը գրաւեն այդ միապաղաղ տարածութեան վրայ: Այս շէնքերուն գլուխ-գործոցը կը հանդիսանայ Baron Empainին համար շինուած հոյակապ պալատը: Empain 1907-ին Ֆրանսացի ճարտարապետ Alexandre Marcelին կը վստահի աննախադէպ կառոյց մը յղանալը, ուր ան մտադրած էր կայք հաստատել:



Զելիոպոլսոյ Empain պալատը

1911-ին բարձրուկի վրայ գետեղուած չնաշխարհիկ պալատը, իւրայատուկ Զինտու ոճով՝ ներշնչուած Գամպոտիոյ Angkor Wat տաճարէն, զմայլանքի արժանացած է առաջին իսկ օրէն: Ան իր արտասովոր ու առեղծաւծային տեսքով կ'իշխէր ոչ միայն Avenue des

Palais-ին (1952-ին ետք պողոտային անունը փոխուեցաւ Ալ Օրուպայի) վրայ, այլ բոլոր Զելիոպոլսոյ վրայ:

1929-ին, Baron Empain-ի մահէն եւ Զելիոպոլսոյ Պազիլիք (La Basilique Notre-Dame d'Héliopolis) եկեղեցւոյ մէջ թաղուելէ ետք, ընտանիքը վերջնականապէս կը հաստատուի Պելճիքայի մէջ ու պալատը կը փակուի: 1952-ի յեղափոխութեան հետեւանքով, Եգիպտոս-Պելճիքա յարաբերութիւնները կը վատթարանան ու 1957-ին Empain ընտանիքը խոհեմութիւն կը նկատէ պալատը ծախել: Ալ-Քասմ եւ Ռէտա ընտանիքները կը գնեն զայն, սակայն տարիներէ ի վեր լայնատարած կալուած մը օգտագործելը՝ անհոգութեան պատճառով իրենց կարողութենէն վեր ըլլալուն, դժբախտաբար կամ հաւանաբար՝ բարեբախտաբար, կը թողուն զայն եւ նորոգութեան միտումով աւերիչ փոփոխութիւններ չեն կատարեր: 1980-ին պալատը կ'արձանագրուի որպէս պատմական եւ պահպանելի կառոյց, եգիպտական հնագիտական նախարարութեան կողմէ ու կը դառնայ Զելիոպոլսոյ խորհրդանիշը: Սակայն զայն միակ պահպանողը պարզապէս Զելիոպոլսոյ չոր ու տաք կլիման էր: Չրկուած իր կահ-կարասիներէն, արձաններէն, ջահերէն ու մանաւանդ հարազատներուն ներկայութենէն, ան յամառօրէն կը տոկար ու կանգուն կը մնար:

Մայիս 2005-ին, Զելիոպոլսոյ 100 ամեակէն մի քանի շաբաթ առաջ, շնորհիւ նախորդ նախագահին տիկնոջ՝ Սիւզան Սուպարաքի ջանքերուն, Empain պալատը Եգիպտոսի կառավարութեան սեփականութիւնը դարձաւ ու անոր վերաբերեալ մեծածաւալ ծրագիրներ սկսան մշակուիլ: Անմիջապէս դալարագեղ մարգագետին մը ծածկեց պալատին հազարաւոր մէթր անջրդի ու քարքարուտ շրջափակը: Մինչեւ շէնքին վերանորոգման աշխատանքներուն սկսիլը, պարտեզը սկսաւ գործածուիլ մշակութային եւ երաժշտական ձեռնարկներու համար, որոնց ներկայ կ'ըլլային Զելիոպոլսոյ բնակիչները:

Baron Edouard Empain-ի կրտսեր որդին՝ Louis Empain, 1930-ին Պրիւքսէլի մէջ ընտանեկան մենատուն մը կառուցելու աշխատանքը կը վստահի զուիցերիացի յայտնի ճարտարապետ Michael Polak-ի, որ 2500 քառակուսի մէթր տարածութեան վրայ կը կանգնեցնէ հո-

յակապ Villa Empain-ը, որուն ճարտարապետութեան ոճն ու գործածուած շքեղ շինանիւթերը հիացում կը պատճառեն ցարդ:

Կարծեք Empain ընտանիքի համար կառուցուած շէնքերը, ըլլան անոնք պալատ կամ մենատուն, անբնակ ու ամայի մնալու ճակատագրէն չեն կրցած խուսափիլ: Աշխատանքները աւարտելէն հազիւ 3 տարի ետք, 1937-ին, արուեստի սիրահար Louis Empain իր մենատունը կը նուիրէ Պելճիքայի կառավարութեան՝ ժամանակակից եւ զարդարւեստի թանգարանի մը վերածելու համար զայն: Մինչ սոյն ծրագրին նախապատրաստական աշխատանքները կը տարուէին, վրայ կը հասնի Զամաշխարհային Երկրորդ Պատերազմը: 1943-ին մենատունը կը գրաւուի գերմանական բանակին կողմէ եւ կը ծառայէ որպէս կեդրոնատեղի՝ մինչեւ պատերազմին աւարտը: Խաղաղութենէն ետք մի քանի տարի ան կը

գործածուի որպէս Խորհրդային Միութեան դեսպանատուն:

Louis Empain, որ արդէն տարիներէ ի վեր վերջնականապէս Գանատա հաստատուած



Մանրաքանդակներ
Empain պալատէն



Պրիւքսէլի Villa Empainը

էր, դատի կը դիմէ ու կը յաջողի 1960-ական թուականներու վերջաւորութեան վերատիրանալ իր կալուածին, հիմնուելով այն կետին վրայ, որ Պելճիքայի կառավարութիւնը թերացած էր շինութիւնը թանգարանի մը վերածելու իր պատասխանատուութեան մէջ: Ան կը ծախէ դժբախտ Villa Empain-ը ամերիկացիի մը, որ մինչեւ 1990 զայն վարձու կու տայ ձայնասփիւռի եւ հեռուստատեսութեան ընկերութեան մը: Այս անբաղձալի կալուածը ձեռք-ձեռք կ'անցնի, չարաչար կը գործածուի ու կը ներկայանայ տխուր ու անխնամ վիճակով, Պրիւք-



սելի շատ յայտնի Avenue Franklin Roosevelt-ի վրայ:

2006-ին Պողոսեան Ֆոնտը կը գնէ այս կիսաւեր կալուածը, որ նոյնիսկ իր խղճալի վիճակին մէջ Art Deco ճարտարապետութեան գոհար մըն էր ու անմիջապէս աշխատանքները կը սկսին՝ իր անցեալի փառքին վերադարձուելու համար զայն:

Երկու տարի բժախնդիր նորոգութիւններէ ետք, 17 Դոկտեմբեր 2008-ին մենատան պաշտօնական բացումը կը կատարուի՝ ի ներկայութեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի եւ Պողոսեան ընտանիքի անդամներուն: Այս շքեղ կառոյցը, ընտանեկան ֆոնտին կեդրոնատեղին ըլլալուն զուգահեռ, կը դառնայ համաշխարհային օրրան մը՝ Արուեստի Կեդրոն մը եւ մշակութային երկխօսութեան միջոց մը՝ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Villa Empain, իր երկար տարիներէ ի վեր փակ մնացած դռները հանրութեան առջեւ կը բանայ Ապրիլ 2010-ին: Յուշահանդեսներ, ասուլիսներ ու համաշխարհային ժողովներ գիրար կը խաչաձեւէին այս շքեղ մշակութային կեդրոնին մէջ որ վերջապէս, անելի քան 70 տարի յապաղումէ ետք, շնորհիւ Պողոսեան Ֆոնտին, կ'իրականացնէ իր նուիրատուին տեսիլքը:

Մարտ 2008-ին, դէպի Պրիւքսէլ այցելութեան մը ընթացքին, Տիկին Սիլվան Մուպարաք հանդիպում մը կ'ունենայ Ժան Պողոսեանին հետ: Տիկին Մուպարաք հետաքրքրութեամբ կը դիտէ Villa Empain-ի վրայ կատարուած վերանորոգութեան աշխատանքները եւ այդտեղ ծնունդ կ'առնէ Պրիւքսէլի եւ Զելիոպոլսոյ միջեւ մշակութային կապ մը ստեղծելու միտքը. կապ մը որ պիտի ամրապնդուէր Empain ընտանիքի կողմէ կառուցուած երկու կոթողային կառոյցներուն միջոցաւ:

2009-ին Պողոսեան Ֆոնտը՝ աջակցութեամբ Պելճիքայի Արտաքին Գործոց Նախարարութեան, կը սկսի ուսումնասիրութիւններ կատարել Empain պալատը վերանորոգելու ուղղութեամբ:

Սակայն, 25 Յունուար 2011-ի յեղափոխութիւնը գահընկէց ըրաւ 30 տարուայ նախագահ Հոսի Մուպարաքը: Երկրին քաղաքականութիւնը անորոշութեան մատնուեցաւ, ապահովութիւնը վտանգուեցաւ, տնտեսութիւնը անկումի ենթարկուեցաւ: Այս տեսակ ծանրակշիռ կացութեան մը ընթացքին մշակութային ծրագիրներ մշակելը անտեղի էր: Լքուած Empain պալատը շրջապատող խնամուած մարգագետինը անյայտացաւ ու անապատի



Պրիւքսէլի Villa Empain-ին ներքնամասը

աւազները անգամ մը եւս գրաւեցին իրենց դարաւոր դիրքը պալատին շուրջ:

Սակայն ահաւասիկ յոյսի նշոյլ մը առկայծիլ սկսաւ. հնագիտութեան նախարար Մոհամետ Իպրահիմ, 29 Ապրիլ 2012-ին հանդիպում մը ունեցաւ Եգիպտոսի մէջ Պելճիքայի դեսպանին հետ, որուն ընթացքին Empain պալատը վերանորոգելու ծրագրին մասին լուրջ որոշումներ առնուեցան: Կը նախատեսուի համագործակցութիւն մը հաստատել Պրիւքսէլի Villa Empain-ի եւ Զելիոպոլսոյ Baron Empain պալատին միջեւ, զանոնք մշակոյթի համաշխարհային կեդրոններու վերածելու համար: Թէեւ Զելիոպոլսոյ Empain պալատը երկրին սեփականութիւնը պիտի մնայ, մեծ հաւանականութիւն կայ որ Villa Empain-ի տէր Պողոսեան Ֆոնտն է որ պիտի կատարէ անոր ներքին ու արտաքին վերանորոգումները:

Սօսի Ներքնտան-Յակոբեան

*** Պողոսեան Ֆոնտը հիմնուած է 1992-ին լիբանանահայ ոսկերիչ Ռոպեր Պողոսեանի եւ իր երկու զաւակներուն՝ Ժանի եւ Ալլաէնի կողմէ Ժընեւի մէջ: Համոզուած ըլլալով որ երկրի մը ապագան իր երիտասարդներն են, ֆոնտին նպատակն է ուսում ջամբել հայ պատանիներուն եւ երիտասարդներուն: Ֆոնտը տարբեր ծրագիրներով օգտակար հանդիսացած է Հայաստանի եւ Կիւմրիի մէջ, մասնաւոր 1988-ի ահաւոր երկրաշարժէն վնասուած շրջաններուն մէջ հիմնելով դպրոցներ ու որբանոցներ:*

Աղբիւրներ :

-HELIOPOLIS - Edited by Ann Van Loo and Marie-Cecile Bruwier.

-Fostering East-West Cultural Dialogue by Diane Hennebert

ՀԲԸՄ ԳԱՅԻՐԷ

ՄԵԾԱՐԱՆ-ՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻՒ ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍԻ ՏԵՕՎԼԵԹԵԱՆԻ

Կիրակի, 6 Մայիս 2012ի երեկոյեան, Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը յարգանք եւ գնահատանք մատուցեց Տիկին Արաքսի Տեովլեթեանի, ՀԲԸՄ-ի պաշտօնաթերթ՝ «Տեղեկատու»ի խմբագրի իր յանձնառութենէն հեռանալուն առիթով: Ան ինը երկար տարիներ, համակ նուիրումով, անշահախնդրօրէն, վարած է վերոյիշեալ եռամսեայ պարբերաթերթին խմբագրութիւնը:

Սոյն ճաշկերոյթ-ընդունելութեան, որ տեղի ունեցաւ Զելիոպոլսոյ Սրբուհի Թերեզա ակումբի օդասուն տանիքին վրայ, ներկայ էին Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան անդամներ, օժանդակներ, ինչպէս նաեւ «Տեղեկատու» պարբերաթերթի վերջին տարիներու աշխատակիցները:

Համադամ ճաշերու սպասարկութենէն ետք, խօսք առաւ ՀԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան: Ան վարչութեան կողմէ խորին շնորհակալութիւն յայտնեց Տիկին Արաքսի Տեովլեթեանի, անոր երկար տարիներու գնահատելի եւ անբասիր աշխատանքին համար ու շեշտեց որ ան նուիրումով եւ սիրայօժար կատարած է իրեն վստահուած պատասխանատու պաշտօնը: Ապա յաջորդաբար խօսք առին «Տեղեկատու»ի աշխատակիցներէն Տիկին Անժիկ Կանիմեան, Տիկին Շաքէ Մարգարեան՝ պաշտօնաթերթի այժմու խմբագիրը, եւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ Տիար Պերճ Թերզեան: Բոլորն ալ դրուատեցին Տիկին Արաքսի Տեովլեթեանի արժանիքները, թուեցին անոր առաքիւնութիւնները՝ գնահատելով անոր նուիրումը, լրջութիւնը, համեստութիւնը եւ կարողութիւնները:

Երեկոյթի աւարտին, առ ի գնահատութիւն երկար տարիներու իր նուիրումին եւ գործունեութեան, Գահիրէի ՀԲԸՄ-ի կողմէ Տիկին Արաքսի Տեովլեթեանի յանձնուեցաւ բիւրեղապակեայ փորագրուած յուշանուէր մը:

Հուսկ ուրեմն, պարգեւատրեալը խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան՝ գնահատանքի սոյն հաւաքոյթը կազմակերպած ըլլալուն համար, ինչպէս նաեւ «Տեղեկատու»ի բոլոր աշխատակիցներուն, իրենց բերած աջակցութեան համար: Ապա բարի երթ եւ յաջողութիւն մաղթեց Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան, ինչպէս նաեւ «Տեղեկատու» պարբերաթերթի այժմու խմբագրին եւ բոլոր աշխատակիցներուն:

Անայիս Ճիգմէճեան



Ohan Janikian



Ohan Janikian



«ԾԻԱԾԱՆ»-Ի ՏՕՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ-Ը ՀՐԱԺԵՇՏ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԵՐԳ-ՉԱԽՈՒՄԲԻՆ



Ohan Janikian

Երեք «Ծիածան»ցիներու հրաժեշտի Ելոյթը

Ահա այսօր հրաժեշտ կու տամ քեզի, իմ սիրելի երգչախումբ:

Շարժապատկերի մը պէս աչքիս առջեւէն կ'անցնին տարիները, երբ ես՝ ութ տարեկան հասակիս, ամէն հինգշաբթի մօրս ձեռքը բռնած կու գայի ՀԲԸՄ-ի «Ծիածան» մանկական երգչախումբի փորձերուն: Կարօտով կը յիշեմ Գահիրէի ՀԲԸՄ-ի շէնքին մէջ գտնուող փորձասենեակէն ներս եւ ուրիշ վայրերու մէջ անցուցած մեր բոլոր լաւ պահերը. երգերու փորձերը, դադարներու ժամանակ խաղերը, կադանդ պապաներու այցելութիւնները, տարեդարձներու կազմակերպումները, պտոյտները, Ելոյթները եւ այլն:

Կարծեք երեկ էր, երբ Տիկին Կասիա Ճղալեան մեզի՝ քաղաքը բնակող քանի մը պզտիկներուս իր ինքնաշարժով կը հասցըներ նշեալ վայրը՝ նորակազմ երգչախումբի

փորձերուն մասնակցելու համար: Որոշ ժամանակ անց, չեմ գիտեր ինչ-ինչ պատճառներով, լուր տրուեցաւ որ ծնողները իրենք պիտի զաւակները հասցնէին երգչախումբի փորձերուն: Մայրս, որ բնաւ ազատ ժամանակ չունէր, դժուարաւ այդ օրերը կը հասցըներ զիս եւ ես հոն ինքզինքս կը զգայի ինչպէս «ծուկը ջուրին մէջ», շրջապատուած ծիածանի բազմերանգ գոյներով եւ հնչիւններով:

Երգը իմ կեանքս է ու տարերքս. երգով ես կ'ապրիմ, կը շնչեմ, կ'ուրախանամ ու կը տխրիմ...

Տարիները թաւալեցան ու այսօր ահա մենք՝ «Ծիածան»ի առջինեկներս* հասակ նետելով, վերջին անգամ մը մեր մասնակցութիւնը կը բերենք երգչախումբին՝ իբրեւ երեք «Ծիածան»ցիներ:

**Երեք «Ծիածան»ցիներու անունները*

Վարդուհի Արթինեան

Քաթին Իրատեան

Ասիէ Ճիգմեճեան

Փաթիլ Պաթանի

Թամար Սապրի

Մարինա Սիմոնեան

Ռոքսան Բեհիաեան

Ալէն Գարգուր

Վարդան Թերզիպաշեան

Ռուբէն Սաատ



Ohan Janikian

Փնտրատանքի Շնորհակալագրերու Յանձնում



Ohan Janikian

Անահիտ Յովհաննիսյան



Ohan Janikian

Հինգշաբթի, 14 Յունիս 2012. բազմամարդ է հավաքվել «Պղնձադաշտ» հանդիսասրահը, ուր ՀՀԸՄ-ի Գահիրեի Մասնաճյուղի «Ծիածան» մանկական երգչախումբը ելույթ կ'ունենայ «20-ամեակը Շնորհաւոր, Հայաստան» տոնական համերգով մը. հանդեսը միաժամանակ ներքին խորագիր մը ունի երեք «Ծիածան» ցիներու համար՝ «Հրաժեշտի Համերգ»:

Այժմու 28 «Ծիածան» ցիները պատրաստած են 16 գեղեցիկ երգեր, գեղարուեստական ղեկավարութեամբ Մօ. Միհրան Ղազէլեանի, խմբավարութեամբ Տիկ. Գոհար Ղազէլեանի եւ դաշնամուրային նուագակցութեամբ Տիկ. Նանօր Աբիկեանի:

Բոլոր կատարումները՝ խմբերգեր, մեներգեր, զուգերգեր եւ այլն, հաճելի են եւ սիրելի, իրենց աննշան թերութիւններով հանդերձ, սակայն ամենէն տպաւորիչը եւ անմոռացը փոքրիկ Անահիտ Յովհաննիսյանի կատարումն է՝ լի անսահման զգացումով եւ յուզախառն ապրումով (մանաւանդ «Մայրիկ-Լուսաւոր Յուշեր» երգին կատարումը): Անահիտը, որ հանդես եկաւ երկու մեներգներով, նոր եւ անակնկալ բացայայտութիւն մըն է եգիպտահայ հանդիսատեսին համար: Իր թովիչ ձայնով, Անահիտ գրաւեց բոլորին սրտերը եւ հանդիսատեսէն խլեց բազում «պռավօ»-ներ:

Ահա մօտեցաւ պահը եւ բեմ հրաւիրուեցանք մենք... Յուզուած ենք բոլորս... Մեր հարազատ բեմին վրայ եւ մեր սիրելի երգչախումբին հետ ահաւասիկ վերջին անգամն է որ ելույթ կ'ունենանք: Հանդես կու գանք երկու երգերով՝ «Ո՛ր Կ'երթայ Մանկութիւնը» եւ «We Are The World»... ու յուզ-

ւեցաւ մեզի հետ նաեւ հանդիսատեսը: Վըստահաբար, ինչպէս մենք, անոնք ալ կարօտեցած էին մեր ելույթները: Անշուշտ շատ կ'ուզէի որ կատարէիք նաեւ անցեալի մեր այլ սիրուած երգերէն ալ, որոնք մեծ ընդունելութեան արժանացած էին ժամանակին եւ շատ մը սրտեր ջերմացուցած: Օրինակ՝ «Ընկերներս եւ ես», «Տիեզերք», «Երագանք», «Ծիածան» եւ այլն, համոզուած եմ որ ներկաներն ալ սիրով պիտի ուզէին անգամ մը ես լսել այդ երգերը:

Մեր ելույթէն վերջ մեզի յանձնուեցան գնահատանքի շնորհակալագրեր եւ «Ծիածան» շքանշաններ:

Հետաքրքրական զուգահայտութեամբ այսօր մեր երգչախումբին տարեդարձն է. ութ տարիներ «Ծիածան» համոյթը գոյատեւած է եւ դեռ պիտի շարունակէ գոյատեւել:

Այժմ ընկերներուս եւ իմ անունովս շնորհակալութիւն կը յայտնեմ Գահիրեի ՀՀԸՄ-ի վարչութեան, Մօ. Միհրան Ղազէլեանի, Տիկ. Գոհար Ղազէլեանի եւ Տիկ. Նանօր Աբիկեանի, այսքան տարիներու իրենց պատասխանատուութեան, համբերատար եւ նուիրուած աշխատանքին համար, որոնք հոգ կը տանէին մեզի եւ ջերմօրէն կը վերաբերէին իւրաքանչիւրիս:

Ընդհանրապէս հրաժեշտները տխուր կ'ըլլան, սակայն այս հրաժեշտը տխրութեան զուգընթաց լի է նաեւ ուրախութեամբ ու սպասումներով, քանզի մեզմէ ոմանք կ'երթան իրենց ձայները միացնելու Գահիրեի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» մեծերու երգչախումբին:

Վարդուհի Արթիսեան



ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ը ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿՈՎ ՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԲԸՄ-Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Շաբաթ, 5 Մայիս 2012, Չագըր Մշակութային Կեդրոնին մեջ, սեղմ շրջանակի մը մեջ, տեղի ունեցաւ երիտասարդական հաւաքոյթ մը, որուն նպատակն էր ներկայացնել ՀԲԸՄ-ի կազմակերպած բոլոր ամառնային ծրագրերը, որոնցմէ կրնային օգտուիլ իր երիտասարդները:

Հաւաքոյթին բացումը կատարեց Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան, որ հակիրճ կերպով պատմականը ըրաւ ՀԲԸՄ-ի կազմութեան, անոր նպատակներուն եւ կազմակերպութեան: Ապա Տոքթ. Արփի Խաչերեան, որ անցեալին մասնակցած է այս ծրագրերէն երկու հատին, մանրամասն տեղեկութիւններ տուաւ այն պատեհութիւններուն մասին, որոնցմէ կրնան օգտուիլ ՀԲԸՄ-ի երիտասարդները՝ մասնակցելով հետեւեալ

ձեռնարկներէն մէկուն:

-Ամառնային փորձառական վարժութիւններու ծրագրեր Նիւ-Եորքի, Մոսկուայի եւ Երեւանի մէջ:

-«Երաժշտական Հայաստան Ծրագիր», որ երաժշտական դաստիարակչական յայտագիր մըն է բոլոր հայ երիտասարդներուն համար, որոնց առիթը կ'ընծայէ զարգացնելու եւ բարելաւելու իրենց երաժշտական գիտելիքները Հայաստանի մէջ:

-Ամառնային բանակումներ Ֆրանսայի, Երեւանի եւ Նիւ-Եորքի մէջ:

-«Անդրանիկ» Հետազօտիչներու (Scouts) բանակում Հայաստանի մէջ:

-«Ճանչցիր Հայաստանը» շրջապտոյտներ:

Քաղեց՝ Անայիս Ճիգմէճեան

ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ը Կ'ՕԺԱՆԴԱԿԷ ԵԳԻՊՏԱՑԻ ԱՅՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆ-Ի ԻՐ ԼԵՐՏԱՃԱՌ Կ'ԸՆՏՐԵՆ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԻԻԹ ՄԸ

Գահիրէի ՀԲԸՄ-ը, 18 Ապրիլ 2012-ին, գումարուած իր ընդհանուր ժողովի նիստին, 2012-ի պիտոճէին քննարկման ժամանակ, յայտնած էր թէ պիտի շարունակէ իր նիւթական օժանդակութիւնը բերել եգիպտացի այն եօթը համալսարանաւարտներուն, որոնք իրենց մագիստրական կամ տոքթորական թեզը պաշտպանելու համար ընտրած են հայկական թեմա մը:

Նիւթերը, որոնք 2002-էն ցարդ ընտրուած են վերոնշեալ շրջանաւարտներուն կողմէ, հետեւեալներն են.

«Հայաստանի Դերը Հռոմէացիներու եւ Պարթեւներու Պայքարին Մէջ»

«Նուպար Փաշա եւ Եգիպտական Զաղաքականութիւնը (1842-1895)»

«Հայերը Իսթանպուլի Մէջ (1839-1878)»

«Բրիտանիա եւ Հայկական Հարցը Օսմանեան Պետութեան Մէջ (1878-1896)»

«Ցարական Ռուսաստան եւ Հայկական Հարցը Օսմանեան Պետութեան Մէջ (1878-1896)»

«Եագուպ Արթին Փաշա եւ Իր Դերը Եգիպտական Կեանքին մէջ»

«Միացեալ Նահանգները եւ Հայկական Հար-

ցը (1915-1923)»:

Գահիրէի ՀԲԸՄ-ը այս թեզերը պաշտպանող իւրաքանչիւր շրջանաւարտի, ինչպէս նաեւ թեզերու պատրաստութեան համար ընտրուած խորհրդատու դասախօսին (առ ի գնահատութիւն իր կատարած վերահսկողական աշխատանքին), երկու տարի կամ աւելի շրջանի մը տեւողութեամբ, ամսաթոշակ մը կը յատկացնէ՝ մինչեւ իրենց աւարտաճառին պաշտպանութիւնը: Ծրագրուած է նաեւ այդ ուսումնասիրութիւնները քննարկել եւ գնահատումի ենթարկել յետոյ, հրատարակել զանոնք, մատչելի դարձնելու համար հասարակութեան:

Այս կարեւոր աշխատանքը յանձնուած է եգիպտացի պատմաբան Տոքթ. Սոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամի, որ ինչպէս միշտ կը վայելէ Գահիրէի ՀԲԸՄ-ի զօրավիգը:

Գահիրէի ՀԲԸՄ-ի այս քայլով եգիպտացի պատմաբաններու նոր սերունդ մը պիտի կազմաւորուի, որ պիտի շարունակէ հետաքրքրուիլ հայոց վերաբերեալ հարցերով:

Քաղեց՝ Անայիս Ճիգմէճեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷԻ ՀՐԸՄ-Ը ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ ՀՐԱՆՈՒ ԲԷՇԻՇԵԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2012-ի Մայիս ամսուան ընթացքին, Գահիրեի ՀՐԸՄ-ը հրատարակեց եգիպտահայ արուեստագետ Հրանդ Բեշիշեանի դաշնամուրի երկու յօրինումները: Առաջինը՝ «Եկե՛ք Դաշնամուր Նուագենք» (Let's Play The Piano), հրատարակութիւն մըն է յատկապէս դաշնամուրի սկսնակներուն համար: Կը բովանդակէ 12 երաժշտական յօրինումներ, զանազան հնչիւններու այլազան չափական եւ մեղեդական նմոյշներէ, որոնք անհրաժեշտ են դաշնամուրի սկըս-

նակներուն համար:

Երկրորդ հրատարակուած գործը «The Revolutionary Sonata», երաժշտական յօրինում մըն է 15 վայրկեան տեւողութեամբ, բաղկացած երեք շարժումներէ:

Սոյն հրատարակութիւնները կարելի է ստանալ Գահիրեի ՀՐԸՄ-ի գրասենեակէն եւ կամ դիմելով ուղղակի արուեստագետ Հրանդ Բեշիշեանի:

Քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան

ԵԿԷ՛Ր ԴԱՇՆԱՄՈՒՐ ՆՈՒԱԳԵՆՔ

ՀՐԸՄ-ի հովանաւորութեամբ վերջերս լոյս տեսաւ Տիար Հրանդ Բեշիշեանի սկսնակ աշակերտներուն համար յօրինած դաշնամուրի 12 գործեր ընդգրկող գիրքը:

Հեղինակը իր նախաբանին մէջ կ'ըսէ, թէ 20 տարի դաշնամուրի եւ երաժշտութեան դասեր տալով, նկատած է որ աշակերտները գոհ չեն իրենց նուագած գործերէն:

«Իմ հիմնական դիտողութիւնը այս մանկավարժական կարելոր խնդրին այն էր, թէ ուսումնական ծրագրին մէջ եղած գործերը դիտմամբ յօրինուած են երաժշտութեան ուսուցիչներուն կողմէ եւ ոչ թէ երաժիշտներու: Հետեւաբար, այդ գործերուն մէջ չկան հարազատութիւն եւ գեղարուեստական անկեղծութիւն»:

Ահա այս մտորումներու արդիւնքն է Հրանդ Բեշիշեանի շատ արդիական եւ ներկայ սերունդի աշակերտներուն ճաշակին յարմար յօրինումները:

Իւրաքանչիւր խորագիր շատ լաւ կը ներկայացնէ յօրինուած երաժշտութիւնը եւ կ'արթնցնէ թէ՛ նուագողին, եւ թէ՛ ունկնդրին երեւակայութիւնը. ինչպէս օրինակ «Հին Ժամացոյցը», «Ուրախ Երագ», «Ճուտիկները Բակին Մէջ», «Յամառ Տղան», «Հաջող Շունը» ... եւ այլն:

Կը շնորհաւորենք Տիար Բեշիշեանը, մաղթելով անոր նորանոր յաջողութիւններ:

Կասիա Ճղալեան



ՏՈՒՐԹ. ԱՆԻ ՕՀԱՆՆԵՄԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ



Ուրախութեամբ կը տեղեկացնենք թէ Գահիրէի ԶԲԸՄ-ի վարչութեան օժանդակ անդամ Տոքթ. Անի Օհաննեսեան Գահիրէի Էյն Շամս Զամալսարանի Բժշկական Բաժանմունքէն (Faculty of Medicine Ain Shams University) ստացած է Մագիստրոսի աստիճան (Master degree in Internal Medicine), մասնագիտանալով ներքին հիւանդութիւններու մէջ (Specialist in Internal Medicine): Իր ներկայացուցած թէզն էր «Ինքնախտային մոլաքոր» (Thesis in Idiopathic Urticaria):

Տոքթ. Անի Գահիրէի Զամալսարանի Բժշկական Բաժանմունքէն (Faculty of Medicine Cairo University) ստացած է նաեւ Գործնական Սննդառութեան Վկայականը (Diploma of Clinical Nutrition), մասնագիտանալով գործնական սննդառութեան մէջ (Specialist in Clinical Nutrition):

«Տեղեկատու» ջերմօրէն կը շնորհաւորէ Տոքթ. Անի Օհաննեսեանը՝ այս պատուաբեր յաջողութեան համար, մաղթելով անոր նորանոր եւ շարունակական նուաճումներ:

Մեր շնորհաւորանքները նաեւ իր ծնողներուն՝ Տոքթ. եւ Տիկին Արեգ Օհաննեսեանի:

«Տ»

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ . ԾՆՆԴԵԱՆ 300-ԱՄԵԱԿ

շաբ. էջ 7 Էւ

Մէկ շաբաթ ետք՝ Մայիս 27-ին, «Սայաթ Նովա» համոյթը այցելած է Վրաստան եւ մասնակցած Թիֆլիսի մէջ կազմակերպուած ձեռնարկներուն, ուր եւս կայացած են քայլարշաւներ, համերգներ եւ այլ նախաձեռնութիւններ:

Նշենք, որ Սայաթ Նովայի 300-ամեակին առիթով կազմուած է կառավարական յանձնաժողով եւ նախաձեռնութիւնները պիտի շարունակուին մինչեւ տարեվերջ:

Պատրաստեց՝ Շաքէ Մարգարեան



«Վարդատուն»ը Թիֆլիսի մէջ

ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐ-ԳԱՀԻՐԷ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅՈՒՄԸ

Կիրակի, 10 Յունիս 2012-ին, տեղի ունեցավ Գահիրեի ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐԻ ամառնային եղանակի բացման ձեռնարկը, ներկայութեամբ ակումբին անդամներու ու համակիրներու հոծ բազմութեան, որոնք շերմ մթնոլորտի մէջ հաճելի երեկոյ մը անցուցին:

Երեկոյեան ժամը 9-էն սկսեալ, կամաց-կամաց, ներկաները տեղ գրաւել սկսան ակումբին պարտեզին մէջ շարուած սեղաններուն շուրջ: DJ ԷԼ լուսանկարիչ Օհան Ճանիկեան, իր հնչեցուցած երգերով, տօնական մթնոլորտ մը ստեղծեց օդասուն պարտեզին մէջ: Ազատ շքասեղանի փոխարէն, սեղաններուն վրայ շարուեցան տեսակ-տեսակ համադրամներ, որոնց յաջորդեց ճաշի սպասարկութիւնը: Սակայն անուշեղէններու պարագային անակնկալ մը կը սպասէր բոլորին: Մէջտեղ բերուեցան պտուղներու գեղեցիկ յարդարանքով ու անուշեղէններու այլազան տեսակներով բեռնաւորուած երկու սեղաններ: Պտուղներով կատարուած իւրայատուկ «ձեռագործը» յղացումն էր Տիկին Յերմին Սվաճի-պաշեանին, որուն ճարտար ու ճաշակաւոր աշխատանքին շնորհիւ հասարակ պտուղներ արտասովոր ու գեղեցիկ տեսք ստացած էին:

Փոքրիկները, եղանակներէն խանդավառւած, սկսան խումբ-խումբ պարել ու ցատկոտել՝ երեկոյթին պարգեւելով ընտա-



նական մթնոլորտ մը:

Վարչական անդամ Տոքթ. Ճորճ Սիմոնեան, յանուն ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք իրենց մասնակցութեամբ քաջալերած էին այս ձեռնարկը, ինչպէս նաեւ շնորհակալական խօսք ուղղեց Տիկնանց Յանձնախումբին անդամուհիներուն, գլխաւորութեամբ Տիկին Գոհար Առաքելեանի, իրենց տարած աշխատանքին համար:

Կէս գիշերին մօտ սկսաւ վիճակահանութիւնը ու բախտաւոր ներկաներ ստացան պարգեւներ:

Վարձքը կատար բոլորին:

Բեղուն գործունեութիւն կը մաղթենք Գահիրեի ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան:

Սօսի Ներսէսեան-Յակոբեան

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԵԿՈՅ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐ ԱԿՈՒՄԲԷՆ ՆԵՐՍ

Երեքշաբթի, 24 Յունիս 2012-ին, Գահիրեի ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐԸ արեւելեան երեկոյ մը կազմակերպած էր իր ակումբին մէջ:

Ներկաները՝ արաբական երաժշտութեան մեղեդիներու հնչիւններուն տակ, ճաշակեցին եգիպտական եւ արեւելեան ազգային ուտեստեղէնները, ինչպէս՝ *ֆուլ, թամիա, քոշարի* եւ բազմազան համեղ անուշեղէնները:

Այս հաւաքը բարեպատեհ առիթը ընծայեց նաեւ «Euro 2012»-ի առթիւ կայացած «գուշակութեան մրցանք»-ին յաղթական հանդիսացողներուն մրցանակները յանձնելու: Այսպէս, Ա. մրցանակին արժանացաւ Արմէն Աբգարեան, որուն յաջորդեց՝ Յարի Սուլթանեան:

Քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան



ՆԵՐԵՏԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԳՆՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԸ ՆՈՒԻՐԷ ՍԱՐՈՒԽԱՆԻ «ԳՆԴԱՄՈՒՂ ԽԱՂԱՑՈՂԸ» ՆԿԱՐԸ

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ գնդամուղի սրահին համար, Ներետեան ընտանիքը ակում-բին նուիրեց Սարուխանի սկարներէն մին՝ «Գնդամուղ Խաղացողը», որ կը ներկայացնէ երգիծանկարիչին գնդամուղ խաղալը, իր ուրոյն ձեւով:

Նկարը խորագրուած է՝ «Երբ Սարուխան գնդամուղ կը խաղայ»:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնները յայտնած է Ներետեան ընտանիքին՝ իր այս խիստ գնահատելի արարքին համար:

Քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան



ԳՆՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԶԲՕՍԱՊՏՈՅՏԸ ԴԷՊԻ «FORT ARABESQUE» ԿԱՐՄԻՐ ԾՈՎ

Մօտ 24 հոգի մասնակցեցան Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ակումբի կազմակերպած զբօսապտոյտին դէպի «Մաքատի Ծոց»ի գեղատեսիլ «Fort Arabesque» հիւրանոցը, ոչ շատ հեռու Զուրկատայէն: Սոյն զբօսապտոյտը, որ կազմակերպուած էր 18-էն 22 Յուլիս 2012, բացառիկ առիթ մըն էր բոլոր մասնակիցներուն համար, հեռանալու Գահիրեի ժխորէն, խճողումէն եւ խաղաղ հիւնդ օրեր անցընելու բնութեան գիրկը, վայելելով ծովն ու հաճելի միջավայրը:

Կեցութիւնը հիմնուած էր «Ամէն ինչ ներառեալ» սկզբունքին վրայ: Սենեակները ընդարձակ էին՝ օժտուած ամէն յարմարութիւններով:

Զբօսապտոյտը կը վայելէր հոգատարութիւնը ակումբիս անդամ Տիար Լեւոն Նիկոլեանի: Ան ջանք չէր խնայած եւ ամէն միջոց ընձեռած էր մասնակիցներուն խաղաղ ու հաճելի կեցութիւն մը ապահովելու համար:

Քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան



ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐ-ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ ԱՄԱՌ-ՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՑՈՒՄԸ

Աղեքսանդրիոյ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐ մարգական ակումբի ամառնային եղանակի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Յունիս 2012-ին: Ներկայ էին ակումբին ամենօրեայ հաւատարիմ դէմքերը՝ անդամներ, համակիրներ, բարեկամներ: Տիկնանց Յանձնախումբը մեծ աշխատանք տարած էր՝ ստանձնելով այլազան, համեղ ճաշերու պատրաստութիւնը, որոնք մեծապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Մեղմ երաժշտութիւնը եւ մանաւանդ տիրող ընտանեկան ջերմ մթնոլորտը մեծապէս նպաստեցին երեկոյթին յաջողութեան:

Աղեքսանդրիոյ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ ամառնային եղանակի բացման ճաշկերոյթ-հանդիսութիւնը երկար տարիներէ ի վեր հաստատուած հին ավանդութիւն մըն է, ճիշդ Գահիրէի ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ նման:

Քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ «ՔԷՐՄԷՍ»Ը

Աղեքսանդրիոյ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐ մարգական ակումբի սկաուտական շարժումի տարեկան «Քերմէս»ը տեղի ունեցաւ Կիրակի, 24 Յունիս 2012-ին՝ իր կեդրոնատեղիին մէջ, մօտ 120 հիւրերու ներկայութեան, որոնք զուարթ մթնոլորտի մը մէջ հաճելի երեկոյ մը անցուցին:

«Ձեռնարկը շատ յաջող էր», - յայտարարեց ակումբին ատենապետ եւ սկաուտական շարժումի ղեկավար Տոքթ. Կարպիս Թօսունեան: «Սկաուտները, արենոյշները, գայլիկները՝ բոլորն ալ իրենց մասնակցութիւնը բերին անոր կազմակերպութեան: Նոյնիսկ օտար շարժումներէ սկաուտներ եկան, ինչպէս «Scout d'Alexandrie»-ն եւ «Wady El-Nil»-ն, միասնաբար անցընելու այս բացառիկ օրը: Մենք այս «Քերմէս»ը կը կազմակերպենք երկու տարին անգամ մը»:

Գալով Աղեքսանդրիոյ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ սկաուտական շարժումին, ան եգիպտահայ համայնքի միակն է, որ իր հիմնադրութենէն ի վեր անընդմէջ կը գործէ: Տոքթ. Թօսունեան յարեց. «Աղեքսանդրիոյ սկաուտական շարժումը հիմնած է Յովհաննէս Զորլեան՝ 1933-ին, իսկ աղջկանց արենոյշներունը՝

Չապէլ Պասմաճեան 1953-ին: Աղեքսանդրիոյ ՀԱՐՄ ՆՈՒՊԱՐԻ իրերայաջորդ բոլոր վարչութիւնները ջանք չեն խնայած որ շարժումը անընդհատ շարունակուի, հակառակ անդամներուն նօսրացման եւ այն բոլոր դժուարութիւններուն, զորս կը դիմագրաւէ Աղեքսանդրիոյ հայկական համայնքը այս վերջին տարիներուն: Սկաուտական շարժումի հաւաքները տեղի կ'ունենան Ուրբաթ օրերը՝ ակումբին մէջ, անոնց կողքին կը կազմակերպենք շրջապտոյտներ, բանակումներ զանազան վայրերու մէջ, ինչպէս Մարսա-Մաթրուհ եւ այլն»:

Տոքթ. Կարպիս Թօսունեանի կողքին, սկաուտական շարժումի յանձնաժողովը կազմուած է երիտասարդ խանդավառ դէմքերէ, որոնք ուխտած են շարունակել իրենց երեցներուն առաքելութիւնը: Անոնք են. Լուսի Թօսունեան, Այգ Գալայճեան, Ալին Գալայճեան, Թանիա Արթինեան, Վահէ Արթինեան, Անտրէ Իսքանտար, Ալէն Իսքանտար, Զարին Ժարժուրա, Մարի Յարութիւնեան եւ Զելէն Յարութիւնեան:

Քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան



ԱՂԵ-ՔՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2012-ի ՄՐՑԱՇԱՐ-ՔԸ

Ակումբներու գործունեութիւններն ու ձեռնարկները շատ մեծ նմանութիւն ունին մարդարարածի կենաքին հետ: Անոնք ալ կը ծնին, սկիզբը կ'ըլլան փոքր, սակայն տարիներու ընթացքին կը մեծնան, կը բարգաւաճին ու կը հասնին իրենց փառքի շրջանին: Ոմանք յանկարծական դժբախտութեամբ կը հասնին իրենց վախճանին, իսկ ուրիշներ՝ տկար ու հիւանդ կը տոկան, մերթ յուսալքուելով, մերթ ալ սիրտ առնելով կը գոյատեւեն մինչեւ անխուսափելի պատահի ու աշխարհի մէջ ամեն բանի նման ըլլան ոչ եւս: Ճիշտ այս պատկերը պարզուեցաւ մտքիս մէջ, երբ գրիչը ձեռքս առի Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2012ի պասքէթ պոլի մրցաշարքին նկարագրականը ընելու:

Անցեալ դարու 70-ական թուականներու կիսուն էր, երբ ծնունդ առին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայկական վեց մարզական ակումբներու՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, ՀՄԸՄ Արարատի, Սրբուհի Թերեզայի եւ Նիքոլ Իսթի, իսկ Աղեքսանդրիոյ՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ու ՀՄԸՄ Կամքի, տղոց պասքէթ պոլի խումբերուն միջեւ հերթաբար կազմակերպուած տարեկան մրցաշարքերը, իւրաքանչիւր ակումբ իրեն համար նախատեսուած թուականին: Մրցաշարքերը այնքան մեծ ժողովրդականութիւն կը վայելէին, որ եգիպտահայ մարզասէրները իրենց տարեկան ծրագիրները կը մշակէին ըստ այդ թուականներուն: Անհամաձայնութիւններու պատճառաւ, քանի մը անգամ ընդմիջումներ եղած են, սակայն միշտ ալ լուրջ աշխատանք տարուած է կնճռոտ հարցերը հարթելու ուղղութեամբ ու վերակազմակեր-

պելու այդ իւրայատուկ ձեռնարկները:

Այդ անհամաձայնութիւններուն վերջինը պատահեցաւ 2011ի Յուլիսին, երբ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը իր ձեռնարկին թուականէն շաբաթ մը առաջ ջնջեց իր մրցաշարքը՝ երկրին մէջ տիրող «անապահովութեան» պատճառով ու տարուան մնացեալ բոլոր մրցաշարքերուն իր մասնակցութիւնը չբերաւ: Երբ 2012ի Յուլիսին ակումբը յարմար նկատեց իր մրցաշարքը կազմակերպել ու հրաւերներ ուղղեց ակումբներուն, ՀՄԸՄ Արարատն ու Սրբուհի Թերեզան, պատճառաբանելով անոր չմասնակցիլը նախորդ տարւայ իրենց կազմակերպած մրցաշարքերուն, մերժեցին հրաւերը:

Ուրեմն, Ուրբաթ 13 – Շաբաթ 14 Յուլիսին տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցաշարքը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի՝ Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին եւ Նախագահութեամբ Տէր եւ Տիկին Նուպար Սիմոնեանի՝ ատենապետ Գահիրէի Պատկ. Թեմական Ժողովի: Երկու բաժակներ նուիրուած էին Տիկին Յերմինէ Վարձպետեանի կողմէ՝ ի յիշատակ իր ամուսնոյն՝ հանգուցեալ Յակոբ Վարձպետեանի: Իսկ մասնակցող խումբերն էին Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, ՀՄԸՄ Կամքը եւ հիւրընկալ խումբը: Մետայւնները, ինչպէս միշտ, նուիրուած էին Տէր եւ Տիկին Վարդ Աղեքսանեանի կողմէ:

Ուրբաթ օրուան մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՀՄԸՄ Կամքի միջեւ էր: Ուժերը գրեթէ հաւասար ըլլալուն, մրցումը հետաքրքրական էր եւ մինչեւ մրցումին աւարտը





ՄԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ (1931-2012)

Կիրակի, 15 Յուլիս 2012-ին, Զելիոպոլսոյ Ամենայն Սրբոց գերեզմանատան մէջ թաղման արարողութիւնը կատարուեցաւ եգիպտահայ մտաւորական, պատմաբան, «Արեւ» օրաթերթի երկարամեայ նախկին պատասխանատու խմբագիր, հայոց պատմութեան ուսուցիչ Յովհաննէս Տեր Պետրոսեանի:

Յովհաննէս Տեր Պետրոսեան ծնած է 18 Յունւար 1931-ին, Գահիրէ, այնթապցի ընտանիքի մէջ: Իր նախնական եւ հայեցի կրթութիւնը ստացած է Զելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Վարժարանին մէջ, զոր աւարտած է 1947 թուականին: Այնուհետեւ իր կրթութիւնը շարունակած է անգլիական Սէյնթ Օսթին'գ քոլէճին մէջ: Ընտանեկան դժուարին պայմաններուն պատճառաւ կը զրկուի բարձրագոյն ուսումը շարունակելու հնարաւորութենէն եւ շուտով կը նետուի կեանքի ասպարէզ՝ նեցուկ կանգնելու համար ընտանիքին:

Տարիներ շարունակ ուսման ծարաւը հանգիստ չէր տար անոր եւ 1955-ին Յովհաննէս՝ ICS անգլիական հեռակայ ինստիտուտին ճարտարապետական ճիւղին ուսանող կ'արձանագրուի ու անոր Լոնտոնի կեդրոնին դասընթացներուն հեռակայ կարգով հետեւելէ ետք, 1960 թուականին քննութիւնները յաջողութեամբ կը յանձնէ եւ կը ստանայ համապատասխան վկայական:

Հանգուցեալը 1952-ին եղած է Զելիոպոլսոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզական ակումբի սկաւումապետ, իսկ 1958-1968՝ խմբապետ:

Սակայն Յովհաննէս Տեր Պետրոսեանի տարերքը գրական աշխատանքն էր: «Արեւ», «Ջահակիր» եւ «Արաքս» թերթերու մէջ երեւցած իր յօդուածները

ուշադրութիւնը կը գրաւէն պատմաբան Արշակ Ալպոյաճեանի, որ կը քաջալերէ զայն եւ իր մէջ պատմաբանութեան հանդէպ սեր կ'արթնցնէ, յանձնարարելով անոր, իր երկերուն համար պոլսահայ եւ եգիպտահայ թերթերուն մէջէն ատաղձ գտնելու գործը:

1962 թուականէն սկսեալ, Յովհաննէս Տեր Պետրոսեան կատարած է «Արեւ» օրաթերթի ամենօրեայ առաջին սրբագրութիւնները, իսկ 1990 թուականէն մինչեւ 2004 վարած է նոյն օրաթերթին պատասխանատու խմբագրի պաշտօնը:

Ողբացեալը հեղինակած է «Հայ Ժողովուրդին Ազատագրական Պայքարը ԺԹ. Դարու Ա. Կիսուն» (1988), «Հայ Ժողովուրդին Գոյամարտը (1550-1930թթ)»՝ Ա.հատոր (1997), Բ. հատոր (2002) եւ Գ. հատոր (2009) գիրքերը, պատրաստած է նաեւ «Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն» (1990) հատորը:

Ան ստորագրած է ընդարձակ յօդուածաշարեր «Արեւ»ի մէջ, որոշ շրջան մը աշխատակցած է Պոստոնի «Պայքար», Պոլսոյ «Մարմարա» եւ Գահիրէի «Ջահակիր» թերթերուն:

Յովհաննէս Տեր Պետրոսեան սփիւռքահայ մտաւորականութեան մէկ նմոյշն էր, որ իր կարելին ի գործ կը դնէր սփիւռքահայ զանգուածներու հայապահպանման եւ մայր հայրենիքին շուրջ զանոնք համախմբելու համար:

Տերը երկնային յաւերժական հանգիստ շնորհէ հանգուցեալին եւ լուսաւորէ իր հոգին:

Քաղեց՝ Շ.Ս.



յստակ չէր թէ ով պիտի ըլլար յաղթականը: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մէկ պասքէթի առաւելութեամբ տիրացաւ բաժակին:

Շաբաթ օրուան մրցումը երկու ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր: Միայն մէկ մրցում խաղալու համար Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը համաձայնած էր այդ օրը խումբը Աղեքսանդրիա տանիլ: Յիսուն հոգիւնոց հանրաշարժին մէջ, մարզիկներուն միացած էին նաեւ գահիրեցի մի քանի մարզասերներ: Սկիզբը թիւի տարբերութիւնը շատ չէր, սակայն վերջաւորութեան Գահիրէի խումբը յաղթեց 80-60 արդիւնքով ու տիրացաւ բաժակին:

Ամէն տարի այս մրցաշարքերուն աչքի կը զարնէր Գահիրէէն եկած մարզասերներու բազմութիւնը, սակայն այս տարի դաշտին շուրջ շարուած աթոռները թափուր մնացած

էին: Եգիպտահայ մրցաշարքերու ապագան շատ փայլուն չ'երեւիր, մանաւանդ եթէ նկատի առնենք երբեմն պատահած անհամաձայնութիւնները եւ անոնց կողքին բարդէնք Աղեքսանդրիոյ զոյգ ակումբներուն դիմագրաւած դժուարութիւնները՝ նոր սերունդի բաւարար թիւով մարզիկներ ապահովելու, որոնք պէտք է գան ու միանան հիներուն:

«Միջին տարիքի» հասած եգիպտահայ այս մրցաշարքերը արդեօք պիտի կարենան գոյատեւել, թէ զաղութի պատմութեան էջերուն մէջ քաղցր յիշատակի մը պիտի վերածուին:

Սակայն մաղթենք, որ անոնք վերագտնեն իրենց անցեալի փառքը, պատկանելիութեան զգացումով զօրացած պայքարով:

Սոսի Ներսէսեան-Յակոբեան



ԱՆԴԱՄԱԿԱՆ ԱՂԵՔՍԱՆՈՐԻԱ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



Անհուն հրճուանքով կը տեղեկանանք, թե ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի անդամուհիներէն եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կայտական բաժնի պատասխանատուներէն ու նոյն ակումբի պասքէթ պոլի աղջիկներու խումբի մարզիկուհի Օրիորդ Գարին Մուշեղ Պասմաճեանի ընդ Տիար Ալէն Կարկուրայի՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ պոլի Ա. խումբի լաւագոյն մարզիկներէն, Ս. Պսակի խորհուրդը տեղի ունեցաւ Ուրբաթ, 22 Յունիս 2012-ին, Աղեքսանդրիոյ Սէնթ Մարք եկեղեցիին մէջ: Ս. Պսակի արարողութեան մասնակցեցաւ Աղեքսանդրիոյ Առաջնորդական փոխանորդ եւ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գրիգոր քինյ. Մուրատեան:

Ջերմօրէն կը շնորհաւորենք նորապսակ ամուլը եւ իրենց ծնողները՝ Տէր եւ Տիկին Մուշեղ Պասմաճեանը եւ Տէր եւ Տիկին Ազիզ եւ Մարի Զարըքեան-Կարկուրան, ինչպէս նաեւ մեծ մայրը՝ Տիկին Զապէլ Պասմաճեանը:

Նորապսակներուն կը մաղթենք երջանկութեամբ եւ ջերմութեամբ լեցուն համատեղ կեանք մը:

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Աղեքսանդրիոյ ՀԲԸՄ-ի Վարչութիւնը խոր ցաւով կը գումբ մահը Մասնաճիւղի երկարամեայ անդամուհի Անայիս Յովհաննէս Ուզունեանի, որ պատահեցաւ Շաբաթ, 10 Մարտ 2012-ին Աղեքսանդրիոյ Սմուհա հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Ամենակալն Աստուծոյն կը հայցենք որ իր հոգին արժանացնէ երկնային օթեաններու եւ միխիթարութիւն պարգեւէ իր քրոջ՝ Տիկին Էլիզ Ուզունեան-Սիմոնեանի եւ հարազատներուն:

Խունկ եւ յարգանք հանգուցեալի յիշատակին:

Նազարէթ Գարթալեան